








ՀՅԳ Պատժարներ




ԴՐՕՇԱԿ



Հունիս N7 (1610)

2009





“Դրօշակ”

ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ ՀՅԴ

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

խմբագիր՝ Կ. Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեռավորումը՝ Մ. Հովսեփյանի

Ոճը՝ Ս. Փարթամյանի

Գրանցման վկայական 897

Երեւան, 375010, Սիեր Սկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ. փոստ. droshak@arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

“Droshak” monthly,
ARF dashnaktsoutian publication

Editor-in-Chief: Rouben Hovsepien

12| 1 Mher Mkrtchian, Yerevan, 375010
Tel. 521 876
e.mail: droshak@arf.am

Խմբագրական

Ստեփանակերտում գումարուած համահայկական

համաժողովի հետքերով 2

Կլոր սեղան

Հայաստանի և Թուրքիայի միջև ճանապարհների

վերաբացման առևտրահարկային հիմնախնդիրները 4

Նյութեր թուրք դասնաբանների համար

Տրամիզոնի հայոց

սեղահանության և կոստրաժների դասական նիստերի

արձանագրությունները 14

Տեսական

Ազգային դեմոկրատիայի ստեղծելու ճանապարհին

22

Կրթական

Պետություն-կրթություն-մասնավոր հասվածների

եռանկյուն 30

Տեսակետ

Ինչու Սոցիալիզմ

36

Մի երգի դասնություն

Սոցիալիզմի Գարեգին Նժդեհին նուիրուած երգին

100-ամեակին առիթով 41

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Բռնակալութեան անկումը: Պարսկաստան 45

Նոր գրքեր


Ընկեր Էդիկի աշխատաստեղծակում

46

Պատկերասրահ

Ռուբեն Արովյան

48



Մտեփանակերսում գումարուած համահայկական համաժողովի հեճերով

Լեռնային Ղարաբաղի Հանրադեճութեան մայրաքաղաք Մտեփանակերսում, 2009 թ հուլիսի 10-ից 11-ը, աւելարհի 25 երկրներից ժամանած հայութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ, գումարուեց համահայկական համաժողով:

Քննարկումների կիզակէտում համազգային նշանակութեան երկու գլխաւոր խնդիրներն էին՝ հայ-թուրքական յարաբերութիւնները եւ Արցախեան հիմնահարցը:

Յայտարարուած բանաձեւերում հասստատում է սկզբունքային այն մօտեցումը, որ հայ-թուրքական ներկայիս սահմանների բացումը, անկախ հայ-թուրքական դիւանագիտական յարաբերութիւնների մակարդակից, միջազգային օրէնքի դարձարութիւն է, որն էլ, զոտ քաղաքական նկատարումներով, շահարկում է Թուրքիայի կողմից՝ Հայաստանին զիջումներ դարձարելու նդարակով: ՀՀ արտգործնախարարութեան համար դարզ չէ՞ արդէօք, որ Թուրքիան, սահմանը փակելով եւ Հայաստանին քջափակման ենթարկելով, սարիներ շարունակ խախտել է միջազգային նորմը եւ թշնամական կեցումձք որդեգրել Հայաստանի նկատմամբ: Պարզ չէ՞ արդէօք, թէ որն է հայ-թուրքական յարաբերութիւնների մեկնակէքը, եւ որ Թուրքիան, բարի կամք դրսեւորելու համար, դարձարու է հիմնովին փոխել իր ներկայիս կեցումձքը Կարծում ենք, որ այս դարզ հարցերին սրուող ցանկացած դարձարախան, ըստ էութեան, մտահոգութեան հսկայական առիթ է սալու բոլորիս: Եթէ ՀՀ արտգործնախարարութիւնը իրազեկ է այս կացութեանը եւ լռում է, նշանակում է, որ շան գլուխը այլ ճեղ է թարում, իսկ եթէ իրազեկ չէ, աղա... Եր-

կու դէրմում էլ, կարծում ենք, որն. Նալքանդեանի ինքնական հրաժարականը չափազանց խելացի որոշում կը համարուի, եւ դարձարութիւնն ու հայ ժողովուրդը երբեք չեն մոռանայ նախարարի այս քաղաքակիրթ խելամտութիւնը...

Հիմա անդրադարձնամք շան գլխին. Հայ-թուրքական յարաբերութիւնների «ձանադարհային քարտէզի» հիմնարար սկզբունքները նախ հրադարակուեցին Թուրքիայում, իսկ յետոյ ալիքները հասան Հայաստան: «ձանադարհային քարտէզի» բովանդակութիւնից աղշած մեր ուղեղները ստոյգ կաթումձից փրկեց թուրքական սկզբնաղբիւրների հաւաստիութեան խնդրի տուրջ մեր իշխանութիւնների կողմից յարուցում կասկածամտութիւնը: Չափազանց հանգստացնող հանգամանք էր նաեւ ՀՀ վարչադէճի Ազգային Ժողովում տում «ձանադարհային քարտէզի» հրադարակման հաւաստիքը: Մքափուեցինք ու սղատեցինք: Արդ ո՞ր է «քարտէզը»: Որո՞նք են այն սկզբունքները, որոնց տուրջ Թուրքիայի դիւանագէտների հեճ փոխհամաձայնութեան են եկել մեր դիւանագէտները, որոնց հրադարակման համար ՀՀ արտգործնախարարութիւնը եւ նոյնիսկ ՀՀ վարչադէճը լուրջ վերադարձումներ ունեն: Մեզ մնում է միայն ենթարդութիւններ անել «ձանադարհային քարտէզի» ոչ հայանդարս լիներելու մասին:

Համազգային համաժողովը, հասստելով այս հարցում հայ ազգային ուձերի կողմից մինչ այդ արձարծում մտահոգութիւնները, եզրակացում է, որ «Հայաստանի իշխանութիւնը դարձարու է վերազնահատել ու իմաստարել մեկ սարի առաջ իր նախաձեւում հրադարակային յարա-

բերութիւնների ընթացքը, արդէն իսկ առկայ բացասական արդիւնքները, միջազգային հանրութեան առաջ բացայայտել Թուրքիայի իրական նոյասակները եւ **դադարեցնել բանակցութիւնները**» (ընդգծումը մերն է. - խմբ.):

Արցախեան հիմնահարցի մասին եւս համազգային համաժողովը յայտնեց իր մտածողութիւնները: Մադրիդեան նորոգուած սկզբունքների բացայայտումը, կամ, ինչդէպ հայաստանեան մամուլն է նախընտրում անուանել՝ զաղտնազերծումը, լայն հնարաւորութիւն ընձեռեց հայ ֆաղափական մտքին՝ վերլուծելու Արցախեան հիմնահարցի բանակցային հանգուցալուծման գործընթացը: Այս ճակատագրական գործընթացում, աւելի քան երբեք, փորձում են Հայաստանի եւ հայութեան աչքը խոթել երեք սկզբունքներ՝ խաղաղութիւն, ինքնորոշում եւ հողային անբողջականութիւն: Բանակցային գործընթացի նոր լուսարձակի ներքոյ մէկ անգամ եւս փորձենք տեսնել, թէ արդե՞օք կեանքում այս երեք միաժամանակ եւ համատեղ իրականացուելիք սկզբունքներ են:

Պարզունակ կերպով ուզում են մեզ համոզել, որ ազատագրուած հայրենի սարածֆներէից հրաժարուելով, կարելի է աղաւթուել Արցախի ինքնորոշումը: Տեսականօրէն ստացում է, որ հայրենիքի անկախութիւնը եւ հայրենի սարածֆները դրում են նժարի վրայ: Մա անհեթեթութիւն է:

Առաւել զաւեճալի է խօսել մի երկրամասի ինքնորոշման մասին, որի բնակչութիւնը, հանրաքանակը միջոցով, արդէն ինքնորոշուել է 1991 թ.: ՀՀ եւ Ադրբեջանի Հանրապետութեան դիւանագէտները այդ ո՞ր երկրամասի ինքնորոշման սկզբունքի մասին ղէտք է բանակցեն:

Իսկ թէ սարածֆային զիջումները ո՞ր ղէտք է հասցնեն խաղաղութեան սկզբունքը: Ասենք թէ Քարվաճառի ու Ակնայի սարածֆներից հրաժարուելիս եւ դրա փոխարէն, դէ-յուրէ, ստացանք Արցախի անկախութիւնը: Այդդիպի ստանու ֆուօն կայո՞ւն կը լինի: Եթէ կայուն համարուէր այդդիպի ստանու ֆուօն, աղա, դէ-ֆակտո կերպով, տեղի չէր ունենայ ազատագրական ղաւտագրմի եւ ոչ մի գործողութիւն: Պատկերացնելի՞ք է արդե՞օք ԼՂԻՄ-ի չափազանց անբնական սարածֆներով անկախ Արցախի եւ առհասարակ սարածաւազանի կայուն խաղաղութիւնը: Հետեւաբար սրամաքանական է հնչում համահայկական համաժողովի այն բանաձեւը, համաձայն որի՝ «Գիտակցելով որ բանակցութիւնները ենթադրում են փոխզիջումներ, միաժամանակ ղնդում ենք, որ փոխզիջումները հակամարտութեան կարգաւորման բոլոր բաղադրիչների հաւուառումով կարող են լինել միմիայն համարժէք, հաւասարաչափ, միաժամանակեայ եւ տեղադրուել փաթեթային անբողջական լուծման համակարգում»:

Միսայ մի զաղափար է ւաջանառութեան մէջ դրում իւրաւանամէ հոսանքների կողմից. մեր հիմնական

նոյասակը Արցախի ազատագրումն է եղել, իսկ ԼՂԻՄ-ից դուրս սարածֆները ազատագրուել են ղաւտագրման գործողութիւնների արդիւնքում, մարտավարական նոյասակներով: Այս վտանգաւոր զաղափարի դէմ անհրաժէտ է ղայտարել ուղղակի եւ անուղղակի բոլոր միջոցներով, իսկ տեսական գէտնի վրայ՝ յիւտեցնել բոլորին, որ ԼՂԻՄ-ից դուրս սարածֆներն ազատագրուել են բառի բուն իմաստով, եւ նրանցից հրաժարուել, ինքնաբերաբար, նւանակում է հրաժարուել թէ Արցախի անկախութիւնից, թէ ԼՂԻՄ-ի սարածֆներից եւ թէ հէնց Արցախից ընդհանրաղաւթ:

Յաւոք, գոյութիւն ունի ստուակայութեան մի լուրջ բարդոյթ, որից ղաւտականօրէն տառաղում ենք հայերս: Օրինակ. ինչո՞ւ ենք հոգեղէտ հաւոտուել ադրբեջանական այն ֆարոզչութեան հէտ, ըստ որի Արցախի ինքնորոշման հարցը ադրբեջանական կողմի զիջման դրստուրումն է: Եթէ հայկական կողմը Արցախը Հայաստանին վերամիաւորելու փոխարէն ղաւտաղանում է Արցախի անկախութեան հարցը, աղա սա է զիջումը հայկական կողմից: Ադրբեջանի զիջումը, սրամաքանօրէն, այլ բան է ենթադրում. «Բանակցութիւնները ղէտք է նոյասակ ունենան առաջնահէտք լուծում տալ ԼՂՀ անկախութեան ճանաչման եւ նրա անվտանգութեան աղաւթուվման հարցերին եւ չղէտք է ւաջանցեն բոնազաւթուած Շահումեանն ու Գէտաւէնը Մարտակերտի ու Մարտունիի հաւոտածները եւ Ադրբեջանից տեղահանուած հարիր հազարաւոր հայերի իրաւունքները»:

Եթէ 1994 թ. մենք ազգովին կանխատէտիմք «սարածֆներ = ինքնորոշում» բանաձեւման մէջտեղ զալը դիւանագիտական լուծումներում, համոզուած ենք, որ մեր գումարտակները ինքնական կանգ չէին առնի ներկայիս սահմանների վրայ եւ, հայրենի սարածֆները ազատագրելուց բացի, կը գրաւէին, այո, այս անգամ հէնց իրօք կը գրաւէին Լենինուանը: Եւ էլ ինչ հոգ թէ մեզ ինչ կ անուանէին, չէ՞ որ առանց այդ էլ այսօր մեզ ազրեսուր են անուանում: Բայց այսօր եւ ոչ ոք մեր առջեւ չէր դնի հայրենի սարածֆից հրաժարուելու եւ խաղաղ աղրելու զաւեճալի երկընտրանքը:

Մեր համոզմամբ՝ համաժողովի առանցքային եզրակացութիւնը կայանում է ԼՂՀ-ին բանակցային գործընթաց վերաղարձնելու հարցը: Եթէ ԼՂՀ իւրաւանութիւնները համաձայնում են Համաժողովի վերը նուում եզրակացութիւններին, դա ներկայ ֆաղափականութեան նկատմամբ անվտանգութեան դրստուրման ազղանւան ղէտք է համարել: «Արցախեան հիմնահարցի վերջնական կարգաւորման ուղին խաղաղ բանակցային գործընթացն է, որտեղ սակայն ղէտք է փոխուի խտղուած ձեւաչափը, եւ ԼՂՀ-ն հանղէտ զայ իրէւ լիիրաւ կողմ»:



ՀՀԴ բյուրոյի անդամ
Դավիթ Լոբյան

Հայաստանի և Թուրքիայի միջև ճանապարհների վերաբացման առևտրատնտեսական հիմնախնդիրները

(Սկիզբը՝ «Դրօշակ», N 6-ում)

Գյուղատնտեսություն

Թուրքիայի գյուղատնտեսական ոլորտի զգալի ներուժը ենթադրում է աղաղակալի ներմուծումների ներքին արտադրանքով փոխարին-

ման և արտաքին շուկաների ընդլայնման ու արտադրանքի ծավալների աճի միտումներ, ինչը բնութագրվում է վերահսկողության ցածր մակարդակով: Արդյունքում արտադրանքի զգալի մասը չի հարկվում՝ առավելություն ստանալով ներմուծումների նկատ-

մամբ: Թուրքիայի գյուղատնտեսական արտադրողները ստանում են արտադրանքի լրավճարներ և զգալի դաշտայնություն, ինչը արտադրանքի մասնակցությունն ուղղակի աջակցությամբ (եկամսային վճարումներ և արտադրու-

թյան հետ կապված աջակցություն), միջամտական գնումների նվազեցմամբ, գնման գների սահմանմամբ, արտոնյալ վարկերով, գնային աջակցությամբ և բարձր մասնաճնշումով (միջինը 46,7%): Վերջինս մեծ մասամբ կարող է շուկա չթողնել ցանկացած ներմուծողի:

Թուրքիայի գյուղատնտեսության առավելագույն աջակցության չափը (10%) երկու անգամ ավելի բարձր է Հայաստանի ԱՀԿ դարձված չափից: Գյուղատնտեսական հասվածք մի շարքի հատվածում իր ծավալով երկու երկրների համար հարաբերականորեն հավասար է: Դրա հիմքում ընկած է այն փաստը, որ հայ գյուղատնտեսական աշխատողի արտադրականությունը առնվազն երկու անգամ բարձր է իր թուրք գործընկերոջ արտադրականությունից:

Թուրքիան իր գյուղատնտեսական բարեփոխումների շնորհիվ ֆերմերներին սալիս է ուղղակի եկամտային աջակցություն՝ մոտ \$90 մեկ հեկտարի դիմաց: Այդ վճարումները ստանում են Ազգային ֆերմերների գրանցման համակարգում գրանցված ավելի քան 2,75 միլիոն ֆերմերներ (ամբողջի 89%-ը) և 17 միլիոն հեկտար (ամբողջ գյուղատնտեսական հողերի 80%-ը): Մոտ 10 միլիոն մարդ է օգտվում համակարգից, և վճարումները կազմում են գյուղատնտեսական արտադրողներին սրված դրամով արտահայտված ամբողջ աջակցության մոտ 80%-ը:

Մեկանգամյա դրամաշնորհներ են սրամադրվում չա-

փազանց բարձր առաջարկ ունեցող կուլտուրաներից (դեղձ, ծխախոտ) այլ կուլտուրաների մեծածախ անցնող ֆերմերներին: 2001-2005 թթ. անցումային վճարումները կազմել են 298 միլիոն ԱՄՆԴ:

Գյուղատնտեսության համար բյուջեային հասկացումները հաստատվել են ՀԱԱ-ի շուրջ 1%-ի չափով և 2010 թ. դրանց բաժնունը լիարժեքով է հետևյալ կերպ՝ 45% ուղղակի եկամտային աջակցության վճարումների համար, 13% կանխատեսվածից ցածր գների փոխհատուցման վճարումների համար, 12% անասնադառնության աջակցության համար, 10% շրջանների զարգացման աջակցության համար, 5% փոխհատուցման վճարումների համար, 5% բնադառնական ռեզերվային վճարումների համար, 5% մշակաբույսերի աղանդակային աջակցության համար և 5% այլ աջակցությունների համար:

Ամենամեծ գնող գործակալությունները ղեկավարում են և գնում գործողությունից առաջ գներ են սահմանում: Գնման գների աճը երբեմն ավելի բարձր է լինում, քան ինֆլյացիայի ընդհանուր մակարդակը:

Կա մի վարկային ֆոնդ, որն անընդհատ շարունակում է օգտագործել իր եկամուտը և 13,125% դրույքաչափով վարկ է սրամադրում գյուղատնտեսական վաճառքների կոոպերատիվներին և նրանց միություններին՝ արտադրողներից որոշակի մշակաբույսեր և հացահատիկ գներու համար: Ֆոնդի ամբողջական չափը մոտ 640 միլիոն ԱՄՆԴ է:

Ֆերմերների կոոպերատիվներն ու ջրօգտագործողների ասոցիացիաները կառավարում են ամբողջ ոռոգվող տարածքի ավելի քան

40%-ը: Օգտագործողները ոռոգման ծրագրերի ղեկավարում են կառավարման և ղախողանման համար չնչին տարեկան գումար են վճարում: Ոռոգման լրավճարները սահմանափակվում են ոռոգման համակարգում ներդրումներով: Տրամադրվում են արտոնյալ վարկեր՝ առանց տեղի կամ 7%-ով (17,5%-ի դիմաց): Տրամադրվում է նաև ներդրումների աջակցություն, որի 50-75%-ը դրամաշնորհ է:

Ուղղակի եկամտային աջակցություն ստացող ֆերմերները նաև ստանում են ըստ հեկտարի դիզելային վառելիքի վճարում (մինչև 50 հեկտարի համար)՝ վառելիքի միջին ծախսի (80 լիտր/հա) 35%-ը ծածկելու համար: Վճարումները տարբերվել են ըստ աղանդակների՝ կազմելով 18-54 ԱՄՆԴ/հա: Ֆերմերները ստանում են նաև դարձյալային համար վճար՝ տարածքի համադաստիսան: Ներդրանքային լրավճարները ամբողջ գյուղատնտեսական լրավճարների 2%-ից քիչ են:

Միս արտադրողներին սրվում են գնային հավելավճարներ: Անասնադառնության խթանման վճարումներից արհեստական բեղմնավորման հավելավճարը և կաթի խթանման հավելավճարը 2006 թ. կազմել են 25,4 միլիոն և 161,7 միլիոն ԱՄՆԴ: Կանխատեսվածից ցածր գների փոխհատուցման վճարումներ են շնորհվում ձիթաբույսի յուղի, բամբակի, յուղային սերմերի, ցորենի և այլնի համար: Ուղղակի վճարումներ են սրվում, օրինակ, մեծածախ ցեղամաքումության համար:

16 ադրանֆախմբերի համար (սառեցրած, հեղուկազրկած ու դահածոյացված բանջարեղեն ու մրգեր, մեղր, հոմոգենացված մրգային դասրասություններ, մրգահյութ, ձիթադսուղ ու ձիթադսուղի յուղ, մշակված/դահածոյացված ձուկ, թռչնի միս, ձու, թխվածֆարլիթներ, մակարոնեղեն և այլն) սրամադրվում են արսահանման լրավճարներ, որոնք սահմանված են արսահանման արժեքի 10%-ից մինչև 20%՝ արսահանվող ֆանակի 14%-ց մինչև 100%-ի համար:

Գյուղասնեսական հողի հարկը 0% է: Բոլոր ֆերմերները ենթակա են հարկման 2%՝ անասնադահական ադրանֆների վաճառքի արժեքի վրա, և 4%՝ այլ գյուղասնեսական ադրանֆների վաճառքի արժեքի վրա: Երբ գյուղասնեսական ադրանֆը վաճառվում է արժեթղթերի առֆ ու վաճառքով, ադա սոկոսադրույֆները կիսվում են:

Թուրֆայի գյուղասնեսության ներուժով և աջակցության զգալի չաֆերով դայմանավորված ոչ բարենդաս իրադրության ֆոդիսհասուցման համար Հայասանում դեքս է զարգացնել մրցունակություն՝ հիմնված շաս բարձր արդյունավեսության, արսադրողականության և որակի վրա: Դա դեքս է ադահովի արդյունավես ու նդասակային աջակցությամբ, ներադյալ՝ լրավճարներն ու ընդհանուր ծառայությունները, Հայասանի շուկայում գների ու ներմուծման ծավալների շարունակական վերահսկողությամբ, և ըստ անհրաժեշտության կարգավորող ու դասեդանական միջոցների կիրառմամբ: Հայկական արսադրողների ԱԱՀ-ից ազատվող մոս 99%-ը ավելի ֆան կիսասուցվեն ներմուծումների նկատմամբ ԱԱՀ-ի կիրառմամբ: Հայկական այն արսադրողները, որոնց նկատմամբ կկիրառվի ԱԱՀ, կարող են մասամբ ֆոդիսհասուցվել գները նվազեցնելու խիստ դայմանով:

Թուրֆան ունի անսառային սնեսության զգալի ներուժ, ինչը բարենդաս դայմաններով անսառային արսադրանֆի ներկրման հնարավորություն կարող է ստեղծել: Մյուս կողմից, Թուրֆան զգալի ֆանակությամբ գյուղասնեսական հումք է ներմուծում՝ բամբակ, սոյա, արևածաղկի սերմեր ու այլ յուղային սերմեր, հացահատիկ, կենդանական ու բուսական սարքեր ճարդեր ու յուղեր, բուրդ ու այլ կենդանական մազ, ծխախոս և այլն: Այս դահանջարկի առնչությամբ դեքս է դիսարկել հայկական ադազա արսահանումների հնարավորությունը:

Թուրֆական արդյունաբերական ադրանֆների արսադրությունը մի ֆանի անգամ զերագանցում է հայկականին և կարող է զգալի մրցակցային ճնշում հանդիսանալ հայկական արսադրական ճյուղերի վրա ու խոչընդոսել դրանց զարգացումը: Թուրֆայի հեք գոհացող հաշվեշուկի հասնելու համար Հայասանում անհրաժեշտ է խթանել հարաբերականորեն ոչ բարձրակարգ ադրանֆների արսադրությունը՝ նմանատիղ ներմուծումները դրանցով ֆոդիսարիներու համար: Անհրաժեշտ է նաև մշակել բարձր սեխնուղդիական ադրանֆների արսադրության և արսահանման ներուժի զարգացման ռազմավարություն: Այդ ռազմավարության հանգուցային կետերը դեքս է լինեն օսարերկրյա ներդրումների խրախուսումը և մշակող սեֆականության իրավունքների դասեդանությունը:

Արդյունաբերություն

Թուրֆական արդյունաբերության արսադրանֆը ոչ բարձր սեխնուղդիական է և կազմում է երկրի արսահանումների մեծ մասը՝ կենսոնանալով հարևան երկրների շուկաների վրա: Թուրֆայի արդյունաբերական ադրանֆների ներմուծումները հիմնականում բաղկացած են բարձր սեխնուղդիական ադրանֆներից: Մա Հայասանի համար կարող է միայն ենթադրել ոչ բարձրակարգ ադրանֆների զգալի ներհոսք: Թուրֆայում ներդրումային աջակցություն է սանում հիմնականում թեթև ար-

դյունաբերությունը: Հայկական արդյունաբերությունը ունի զարգացման բազմաթիվ խնդիրներ՝ հասվածի վերականուցման գործընթացը դանդաղ է, ընկերությունների գործունեությունը դեռևս դժվար է, նրանց ադրանֆները մրցունակ չեն գնի, որակի ու շուկայավարման խնդիրների դասճառով, հասվածի աճը ոչ կանոնավոր է ու կախված է մի ֆանի հանգուցային ճյուղերի միսումներից, ճյուղային արդյունքը անհավասարաչաֆ է:

Թուրֆական արդյունաբերական ադրանֆների արսադրությունը մի ֆանի անգամ զերագանցում է հայկականին և կարող է զգալի մրցակցային ճնշում հանդիսանալ հայկական արսադրական ճյուղերի վրա ու խոչընդոսել դրանց զարգացումը: Թուրֆայի հեք գոհացող հաշվեշուկի հասնելու համար Հայասանում անհրաժեշտ է խթանել հարաբերականորեն ոչ բարձրակարգ ադրանֆների արսադրությունը՝ նմանատիղ ներմուծումները դրանցով ֆոդիսարիներու համար: Անհրաժեշտ է նաև մշակել բարձր սեխնուղդիական ադրանֆների արսադրության և արսահանման ներուժի զարգացման ռազմավարություն: Այդ ռազմավարության հանգուցային կետերը դեքս է լինեն օսարերկրյա ներդրումների խրախուսումը և մշակող սեֆականության իրավունքների դասեդանությունը:

Հայասանը դեքս է դիսարկի Թուրֆայում, ինչդեքս նաև այլ երկրներում ՓՄՁ ֆորձը՝ ՓՄՁ շրջանակներում առանձին ճյուղերի աջակցության հնարա-

վորության և ընդհանուր առմամբ ՓՄՁ աջակցության ծավալների մեծացման առումով:

Առանձին ուժադրություն են դահանջում Թուրքիայի մանածագործվածքների, հագուստի ու կաշվի ձյուղերը, որոնք կարող են վսանգ ներկայացնել հայ արտադրողների համար: Նշված ձյուղերը ներդրումների աջակցության ծրագրի ներքո ստանում են խթաններ, որոնք ներառում են ներկրված մեքենաների ու սարքավորումների վրա մասսայական հարկերից ազատումը, ներկրված և սեղում գնված մեքենաների ու սարքավորումների վրա ԱԱՀ-ից ազատումը և ներդրումային նախագծերի օգտին վարկային սոկոսարդույթի աջակցությունը՝ 5 սոկոսային կես ՆԹԼ վարկերի և 2 սոկոսային կես արտադրողական վարկերի համար: Թուրքիայում գոյություն ունի նաև վերոնշյալ ոլորտների համար չմշակված բամբակի արտադրության խթանման ծրագիր (32\$ մլրդ.):

Թուրքիան ունի երկաթի ու դողդաշի, ավստրալիական և սարաեռակ հանքարդյունաբերության զարգացող ձյուղեր (Թուրքիայում կան մոտ 77 սնտեսադեպո արդյունահանվող հանքանյութեր), որոնք մոտ հարևանությամբ կարող են դիտարկվել որդես Հայաստանի համար արդյունավետ մասակարարման հնարավորություն:

Թուրքիան ունի էներգիայի ներմուծումների զգալի հավակնություններ և զսնվում է էներգակիրների միջազգային առևտրի հոսքերի սարածում: Հայաստանը

Թուրքիայի համար կարող է լինել ոլորտային մասակարար և սարանցիկ սարածքի հարևան օղակ: Տարածաշրջանային սարանցիկ աղաղակ նախագծերի բոլոր կողմերի համար արդյունավետ իրականացման դիմումով՝ Հայաստանը դեռ է ստանա մասնակցության հնարավորություն: Հայաստանը նաև ունի հումքի վերամշակման ոլորտներում մասնագիտացում, ինքնաադախտման հասնելու և դեղի ընդլայնվող հարևան երկրներ արտահանումները զարգացնելու լավ հնարավորություն, օրինակ՝ իրանական նավթի վերամշակումն ու բենզինի արտադրությունը: Թուրքիան բարձրացնում է էլեկտրաէներգիայի արտադրության իր կարողությունները և երկարաժամկետ հեռանկարում կարող է հասնել էլեկտրաէներգիայի ինքնաադախտման: Հետևաբար, Թուրքիային էլեկտրաէներգիա դեռ է մասակարարվի հիմնականում Հայաստանի առկա կարողությունների շրջանակներում և լրացուցիչ ներդրումների անհրաժեշտությունն ու արտահանման ակնկալվող ծավալները դեռ է գնահատվեն համադասասխանաբար:

Սանիտարական և բուսասանիտարական միջոցներ

Սննդի արտադրության և գյուղատնտեսության ոլորտներում թուրքական սանիտարների համադասասխանությունը միջազգային սանիտարներին բավականին ցածր է և կազմում է համադասասխանաբար 30,5% և 17,1%: Այսուհանդերձ,

Թուրքիան մեծամասամբ համադասասխանացրել է իր օրենսդրությունը Եվրամիության օրենսդրությանը: Կան որոշ բացեր, որոնք վերաբերում են գենետիկորեն փոփոխված օրգանիզմներին և նոր սեսակի սննդին: ԵՄ դահանջներին չի համադասասխանում նաև որոշ աղտոտիչների վերաբերյալ թուրքական օրենսդրությունը: Մարդկային և ֆինանսական ռեսուրսների ցածր մակարդակը թույլ չի տալիս իրականացնել արդյունավետ վերահսկողություն սննդի ոլորտում գործող բավականին մեծ թիվ կազմող հաստատություններում: Եվրամիության իրավական ակտերին ՀՀ օրենսդրության համադասասխանության աստիճանը անհամեմատ ցածր է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայում ակտիվորեն ընթանում է օրենսդրության՝ ԵՄ չափանիշներին համադասասխանեցման գործընթացը, Հայաստանից արտահանումները դեղի Թուրքիա կարող են հանդիմել բազմաթիվ սեխնիկական խոչընդոտների: Այս առումով, կարևոր է ՀՀ առնչվող օրենսդրության ԵՄ-ի հետ աստիճանաբար ներդաշնակեցումը, ինչը կբարձրացնի սննդի հայկական արտադրողների համար Թուրքիայի և ԵՄ-ի երկրների մասշտիվությունը: Բացի դրանից, սահմանի վրա սանիտարական և բուսասանիտարական ստուգումների անարդյունավետ իրականացումը կարող է լուրջ վսանգ ներկայացնել հայկական սղառողների համար՝ հայ-թուրքական սահմանի վերաբացման դարագայում:

Տեխնիկական դահանջներ

Ընդհանուր առմամբ, Թուրքիան ունի 27.512 սահնդարս, որից 770-ը դարձադիր են և հիմնականում վերաբերում են շինարարական նյութերին: Պարսադիր սահնդարսների ընդամենը 9%-ն է համարժեք միջազգային սահնդարսներին: Միևնույն ժամանակ ղեֆ է նեւլ, որ 2008 թ. վերջի դրությամբ Թուրքիան ներդրել էր եվրոպական այսպես կոչված EN սահնդարսների 97,4%-ը: Հիմնական մտահոգությունը վերաբերում է Թուրքիայի կողմից շուկայում վերահսկողության իրականացմանը: Ուստի, հայ-թուրքական սահմանի վերաբացման դարձադարձում հասկադես անհրաժեշտ է բարելավել սերտիֆիկացման և շուկայում վերահսկողության համակարգերը: Մյուս կողմից, անհրաժեշտ է արագացնել Հայաստանում EN սահնդարսների ներդրումը, որդեսզի դեղի Թուրքիա հայկական արձարանի արձահանողները կարողանան բավարարել Թուրքիայում գործող տեխնիկական դահանջները:

Բանկային ծառայություններ

2006 թվականի վերջի դրությամբ Թուրքիայի բանկային հասվածում ներգրավված էր մոտ 150.000 աշխատող, և այն ուներ 353,6\$ մլրդ. ակտիվներ: Նույն

ժամանակահատվածում Թուրքիայում գործում էին 50 բանկ, որից 33-ը՝ առևտրային, 13-ը՝ զարգացման և ներդրումային, և 4-ը՝ մասնակցային: Մեփականության իմաստով թուրքական բանկերից 21-ը մասնավոր էին, 21-ը՝ արձահանման, իսկ մնացածը դեսական էին կամ գնվում էին Խնայողական ավանդների ադահովագրության հիմնադրամի (ԽԱԱՀ) ներքո:

Համաձայն թուրքական օրենսդրության, յուրաբանչյուր բանկ Թուրքիայում ղեֆ է ձևակերտվի որդես բաժնետիրական ընկերություն և ունենա 30 մլն. նոր թուրքական լիրա կադիտալ: Արձահանման բանկերը կարող են գործունեություն իրականացնել Թուրքիայում՝ ստեղծելով մասնաձյուղեր, ներկայացուցչություններ կամ համատեղ կազմակերպություններ՝ արդեն ստեղծված կամ ստեղծման ընթացքում գնվող բանկերի հետ: Արձահանման բանկի առաջին մասնաձյուղի հիմնադրման համար անհրաժեշտ է ԿՎԲԳ-ի հաստատումը: Բացառիկորեն օֆերային բանկային գործունեությամբ զբաղվելու նդասակով որևէ բանկի հիմնադրում թույլատրվում է ԿՎԲԳ-ի խորհրդի որոշմամբ: Բանկային ծառայությունների միջսահմանային սրամադրումը իրավաբանորեն սահմանափակված չէ:

ՀՀ բանկային համակարգում կան խնդիրներ՝ կադված դրանց արդյունավետության հետ: Հնարավոր է, որ հայ-թուրքական սահմանի վերաբացման դարձադարձում Հայաստանի բանկային ծառայությունների շուկայում հայտնվեն թուրքական արդյունավետ մասնակիցներ: Սա կարող է դրականորեն անդրադառնալ բանկային ոլորտում մրցակցության մա-

կարդակի բարձրացման վրա, ինչն իր հերթին կհանգեցնի վարկային ռեսուրսների մասշտիբության բարելավմանը:

Կադիտալի շուկա

Սամբուլի բորսան արժեթղթերի միակ շուկան է Թուրքիայում: Բորսան դեսական հաստատություն է, որի կազմում գործում են 104 բորտրային կառույցներ և 40 բանկեր: 2007 թվականի հուլիսի դրությամբ Բորսայում գրանցված էր 322 կազմակերպություն, որից 100-ը ներառված են Բորսայի National-100 ինդեքսում: 2006 թվականին Բորսայի բաժնետոմսերի շուկայում առևտուրը կազմել էր 229,6\$ մլրդ. (70,8\$ մլրդ.՝ 2002 թվականին):

Հայ-թուրքական սահմանի վերաբացումը և սարածաբանում կայուն ճնեսական զարգացման համար լավ հնարավորությունների ստեղծումը կարող է մեծադես նդաստել Հայաստանում ներդրումների աճին և հետևաբար կադիտալի շուկայի զարգացմանը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է իրականացնել ֆայլեր՝ կադիտալի շուկայի զարգացման համար համադասալիան ենթակառուցվածքներ և բարենդաս դայմաներ ստեղծելու ուղղությամբ:

Ադահովագրություն

2006 թվականի վերջի դրությամբ Թուրքիայում կար 46

ադահովագրական կազմակերպություն, որից 35-ը գործում էին ոչ կյանքի ադահովագրության, 10-ը՝ կյանքի ադահովագրության և կենսաթոշակային, և 1-ը՝ միայն կենսաթոշակային ոլորտներում: Ընկալում գործում է նաև 1 վերաադահովագրական կազմակերպություն: 2006 թվականի վերջի դրությամբ ադահովագրական և վերաադահովագրական կազմակերպությունների ընդհանուր ակտիվները կազմել են 12898\$ մլն.:

Ադահովագրական և վերաադահովագրական կազմակերպությունները կարող են հիմնադրվել միայն որպես բաժնետիրական ընկերություններ: Այնուամենայնիվ, ադահովագրական կազմակերպությունները կարող են հիմնադրվել նաև համասեղ կազմակերպությունների սեփով: Արժասահմանյան ադահովագրական և վերաադահովագրական կազմակերպությունները նույնպես կարող են գործունեություն ծավալել Թուրքիայում՝ իրենց մասնաձյուղերի միջոցով, սակայն այն դրամանով, որ դրանց գործունեությունը երբևէ չի արգելվել հայրենիքում: Հիմնադրումից հետո ադահովագրական և վերաադահովագրական կազմակերպությունները ղեկավարվում են ձեռք բերեն լիցենզիա Գանձադեսական ենթաֆարսուդարությունից՝ յուրաքանչյուր մասնաձյուղի համար մեկական: Որոշ բացառություններով, ոչ կյանքի ադահովագրական ծառայությունների միջսահմանային սրամադրումն արգելված է: Ադահովագրական կազմակերպությունները կարող



են զբաղվել միայն ադահովագրական գործունեությամբ և ղեկավարվեն իրականացնեն կամ կյանքի, կամ ոչ կյանքի ադահովագրություն, բայց ոչ երկուսը միասին: Ադահովագրական և վերաադահովագրական կազմակերպությունների համար բաժնետերերի վճարած կադեստրի նկատմամբ նվազագույն թափանցիկ կազմում է 5 մլն. նոր թուրքական լիրա: Պարտադիր թափուսները ղեկավարվեն սեղում, բացառությամբ արժասահմանում կյանքի ադահովագրությամբ ստացված վճարների, ինչպես նաև կանոնադրական ու ազատ թափուսների, որոնք կարող են ներդրվել արժասահմանում:

Հեռահաղորդակցություն

Վերջին տարիներին Թուրքիայի հեռահաղորդակցության ոլորտը,

հասկալիս բջջային հեռախոսակառուցողի շուկան, շարունակ աճել է: Բջջային հեռախոսակառուցողի բաժանորդների թիվը 2006 թվականին կազմել է 52,7 մլն.: Նմանապես, ինտերնետային կառուցողի օգտագործողների թիվը 2006 թվականին հասել է 12,3 մլն.-ի: 2006 թվականի վերջին սղախոսակառուցողի մեջ եղել է 18,8 մլն. ֆաղաֆային հեռախոսակառուցողի գիծ:

2003 թվականին ավարտվեց «Թուրք Տելեկոմս» ֆիզիկաբազմաբաղադրյալ հեռախոսակառուցողի և մեծ հեռախոսակառուցողի վրա ու միջազգային հեռախոսակառուցողի մենաշնորհը: 2005 թվականին կառավարությունը վաճառեց «Թուրք Տելեկոմս» ունեցած իր 55% բաժնետիր «Ojer Telekomunikasyon AS» կոնսորցիումին: 2005 թվականին, երբ ուժի մեջ մտան սեղական ցանցի համասեղ օգտագործման վերա-

բերյալ նոր կանոնակարգերը, «Թուրք Տելեկոմը» դադարեց լինել ADSL ծառայությունների միակ մասնուցողը: Հեռահաղորդակցության գերասեսչության խորհրդի համաձայն՝ բջջային ծառայությունների ոլորտում կան երկուսի նշանակալի հզորություն ունեցող երեք օպերատորներ՝ Turkcell-ը, Telsim-ը, և Avea-ն:

Օրենսդրությամբ ադա-հովվում է նշանակալի երկուսի կան հզորություն ունեցող օպերատորների ենթակառուցվածքներին բոլոր օպերատորների համար ոչ խսրական և թափանցիկ մուսֆ: Հեռահաղորդակցության գերասեսչությունն ունի նաև վեճերի լուծման մանրամասն ընթացակարգ:

Թուրքիան ունի ինստրուկտային կադի զարգացած միջավայր: Ինստրուկտային ծառայությունները բավականին էժան են, իսկ ենթակառուցվածքներն ունեն մեծ կարողություններ: Այս փաստը կարող է դիտվել որդես ադագա խթան՝ Հայաստանում ինստրուկտային ցանցի զարգացման, այդ ծառայությունների գների կսրուկ իջեցման և ինստրուկտային կադի մասշտիբության և որակի բարձրացման համար: Հայաստանից համակարգչային ծառայությունների արսահանման մասնաբաժինը առևրային ծառայությունների ընդհանուր արսահանման մեջ գերազանցում է այդ ծառայությունների՝ առևրային ծառայությունների ընդհանուր ներմուծումներում համակարգչային ծառայությունների ներմուծման մասնաբաժինն, ինչը վկայում է Հայաստանում այդ ծառայու-

թյունների առկա ներուժի մասին: Միևնույն ժամանակ, Թուրքիայի դեմքում հակառակ դասկերն է՝ համակարգչային ծառայությունները ներմուծվում են ավելի մեծ չափով, քան դրանք արսահանվում են: Ուստի, Թուրքիան կարող է գրավիչ երկուս լինել Հայաստանից համակարգչային ծառայությունների արսահանման համար:

Ծովային սրանսդորս

Թուրքիան նավերի քանակով 2005 թվականին աշխարհում զբաղեցրել է 24-րդ սեղը: Նույն թվականին Թուրքիայում կար 61 նավագործարան, որոնցում աշխատում էր 28,500 մարդ և որոնք ունեին 1,8 մլն. սոննաժի բեռնասարողության կարողություն: Ընդհանուր բեռնավո-

րումն ու բեռնաթափումը ծովային սրանսդորսի ոլորտում աճել է՝ 2006 թվականին կազմելով 232 մլն. սոննա: Նշենք, որ թուրքական նավահանգիստների կողմից մասնուցվող ծառայությունները բավականին թանկ են: Այսդես, 2004 թ. 20 ոսնաչափի կոնսեյների փոխադրումը Թուրքիայի նավահանգիստների միջոցով արժեր մոս 330 կրո, մինչդեռ 70 կրո՝ Ալեքսանդրիայում (Եգիպտոս), 210 կրո՝ Ռադեսում (Թունիս), և 370 կրո՝ Կասաբլանկայում (Մարոկկո):

Առևրական ծովային սրանսդորսը և ուղևորային ծառայությունները, ինչդես նաև նավահանգստային մնացած բոլոր ծառայությունները կարող են մասնուցվել միայն թուրքական դրոս կրող նավերի միջոցով: Թուրքիան ունի նավերի գրանց-



ման երկու համակարգ՝ Նավերի ազգային ռեգիստր և Նավերի միջազգային ռեգիստր: Որդեսգի կազմակերպությունը կարողանա գրանցվել Նավերի ազգային ռեգիստրում, անհրաժեշտ է, որ այդ կազմակերպության 51%-ը դասկանի Թուրքիայի ֆաղաֆաղներին: Նավերի նավադեսները և նրանց առաջին օգնականները ղեկ է լինեն Թուրքիայի ֆաղաֆաղի, մինչդեռ միջազգային բեռնափոխադրումների մեջ ներգրավված նավերի (բացառությամբ կաբոտաժի) անձնակազմի 40%-ը կարող է լինել օտարերկրացի: Թուրքիայի դրոշ կրող նավերը օգտվում են գնային արժույթից, այսինքն՝ դեղի արսասահման ուղղված ղեկավար փոխադրումների կամ ռազմավարական նշանակություն ունեցող հումքի փոխադրման դեղում դրանց գնային առաջարկը կարող է 10%-ի չափով ավելի բարձր լինել, քան այլ ղեկավար դրոշ կրող նավի ամենացածր գնային առաջարկը: Թուրքական նավահանգիստների սակագնային համակարգը հիմնված է Թուրքիայի և այլ ղեկավարումների դրոշ կրող նավերի միջև խտրականության բացառման սկզբունքի վրա:


Չնայած այն հանգամանքին, որ ծովային տրանսպորտի ոլորտում երկիրն ունի մի շարք խնդիրներ՝ կապված սակագների բարձր լինելու, սեխնիկական հագեցածության նվազ մակարդակի և այլնի հետ, հնարավոր է, որ նույնիսկ այս դարազայում թուրքական նավահանգիստների մասուցած ծառայություններն ավելի էժան լինեն Փոթիում մասուցվող

ծառայություններից: Թուրքիայում ծովային տրանսպորտի բարելավմանն ուղղված մի շարք ծրագրերի հաջող իրագործումից հետո բարձրանալու է նվազ ծառայությունների որակն ու իջնելու են այդ ծառայությունների գները, ինչն էլ ավելի ձեռնու կարող է դարձնել հայ արտահանողների և ներմուծողների համար թուրքական նավահանգիստներից օգտվելը:

Օդային տրանսպորտ

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի օդային տրանսպորտի ոլորտում գերիշխում է «Թուրքական ավիաուղիներ» (ԹԱ) ղեկավար կազմակերպությունը: ԹԱ-ից բացի գոյություն ունեն նաև 19 օդային փոխադրող կազմակերպություններ: 2006 թվականին 810 ինֆնաթիռ գրանցված է եղել որդես թուրքական: Թուրքիայում կա 62 օդանավակայան, որոնք գործարկվում են Պեսական օդանավակայանների ձեռնարկության գլխավոր սնորհության կողմից: Օդանավակայաններից 21-ը բաց են միջազգային թռիչքների համար:

Օդային փոխադրողները կարող են տրանսպորտի սեղական շուկայում ծառայություններ, եթե դրանք գրանցված են Թուրքիայում և ունեն 100 և ավելի նստատեղ ունեցող առնվազն 5 գրանցված ինֆնաթիռ, սակայն տրանսպորտային փոխադրումների համար փոխադրողը ղեկ է որդես սեփականություն կամ լիզինգով ունենա 20-99 նստատեղ ունեցող առնվազն 2 ինֆնաթիռ: Փոխադրողի գործադիր և լիազորված ներկայացուցիչների, ինչդեռ նաև բաժնետե-



րերի մեծամասնությունը ղեկ է լինի Թուրքիայի ֆաղաֆաղի: Այսդիտով, արսասահմանյան բաժնետնասը սահմանափակվում է 49%-ով: Այս ոլորտում օտարերկրյա ուղղակի ներդրումների վերաբերյալ սահմանափակումները նվազեցնելու ուղղությամբ ոչ մի աշխատանք չի իրականացվում: Այն փոխադրողները, որոնց բաժնետնասի մեծամասնությունը դասկանում է օտարերկրացիներին, չեն կարող իրականացնել փոխադրումներ ազգային մեկ կեսից մյուսը: Նշենք նաև, որ Թուրքիայի ֆաղաֆաղական ծառայողները դասեռնական գործուղումների ընթացքում ղեկ է օգտվեն ազգային փոխադրողի ծառայություններից:

Երկաթուղային սրանստորս

Թուրքիայի երկաթուղային համակարգը կազմում է 10984 կմ երկաթգիծ, որից 8697-ը հիմնական գծերն են: Երկաթուղային ոլորտում հիմնական խնդիրներից մեկն այն է, որ խիստ բնակեցված սարածիների միջև առկա երկաթգծերը նախատեսված չեն արագընթաց երթևեկության համար:

Թուրքիայի ղեկավար երկաթուղին (ԹՊԵ) Տրանստորսի նախարարության կազմում գործող և ղեկավարության սեփականություն հանդիսացող կազմակերպություն է, որը երկաթուղային ողնորսափոխադրումների և բեռնափոխադրումների ոլորտում ունի դե յուրե մոնոպոլիայի կարգավիճակ: Դրան է տասկանում ամբողջ երկաթուղային համակարգը, ինչպես նաև երկաթուղային մոտիվ ունեցող 6 նավահանգիստ, որից 5-ը գտնվում են մասնավորեցման փուլում: Թուրքիայում չկան մասնավոր երկաթուղային օդերաստիներ: ԹՊԵ-ն ինֆնուրույն է սահմանում փոխադրավճարների մակարդակը՝ Տրանստորսի նախարարության բանավոր համաձայնությունից հետո:

Նշենք, որ Թուրքիան դարձավ երկաթուղային ոլորտի իր օրենսդրությունը համադասասխանեցնել Եվրամիության չափանիշներին, ինչը ենթադրում է, որ երկաթուղային փոխադրումների ոլորտում ղեկավար է ձևավորվեն մրցակցային մայմաններ: Ներկայումս դա հնարավոր չէ, քանի որ թե՛ երկաթ-

գծերը, թե՛ ամբողջ ցարժակազմը (գնացքները, վագոնները և այլն) տասկանում են Թուրքիայի ղեկավար երկաթուղուն: Սակայն ԵՄ չափանիշների ներդրումից հետո հնարավոր կլինի, որ Թուրքիայում գործեն մի քանի երկաթուղային փոխադրողներ՝ իրենց սեփական ցարժակազմով: Սա նշանակում է, որ ԵՄ չափանիշների ներդրումից հետո Հայկական երկաթուղին հնարավորություն կունենա օգտվել Թուրքիայի երկաթուղային ենթակառուցվածքներից:

Նշենք նաև, որ սարածաբանում ֆաղափական և սնեստական իրավիճակի կայունացման դարազայում Հայաստանը կարող է լուրջ նշանակություն ունենալ երկաթուղային բեռնափոխադրումների սեսանկյունից: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է բարձրացնել Հայաստանում երկաթգծերով բեռնափոխադրումների արդյունավետությունը և լուծել դրանց հետ կապված խնդիրները, որոնցից միջազգային սնեստվարող սուբյեկտների կողմից Հայաստանով բեռների փոխադրումը լինի ցահավետ:

Ճանադարհային սրանստորս

Թուրքիայում կա 64.195 կմ մայրուղային ցանց: Մայրուղային սրանստորսի մասնաբաժինը ընդհանուր բեռնափոխադրումներում 2006 թվականին կազմել է 92%՝ 2002 թվականին եղած 88,7%-ի դիմաց: Ուղևորափոխադրումների ցուց 95%-ն իրականացվում է մայրուղիների միջոցով: Թուրքիայում կայուն սրանստորսային ոլորտ ձևավորելու միջոցա-

ռումներ են ձեռնարկվում՝ ծովային և երկաթուղային սրանստորսի բնագավառը խթանելու համար: Թուրքիան ունի բեռնափոխադրումների համար նախատեսված ամենախոշոր երկրորդ ավտոդարկն ամբողջ Եվրոպայում՝ Իսպիայից հետո:

Չնայած այն հանգամանին, որ ճանադարհային սրանստորսի ոլորտում Թուրքիան ունի մի քանի խնդիրներ՝ կապված այլ երկրների կողմից կիրառվող սրանցիային փոխանների, սեխնիկական հագեցածության նվազ մակարդակի, մասնային գործարհների իրականացման սեխնուլոգիաների և այլնի հետ, հնարավոր է, որ նույնիսկ այս դարազայում թուրքական փոխադրողների մասնացած ծառայություններն ավելի էժան գտնվեն վրացական ծառայություններից: Թուրքիայում ճանադարհային սրանստորսի բարելավմանն ուղղված մի քանի ծրագրերի հաջող իրագործումից հետո բարձրանալու է նվազած ծառայությունների որակն ու իջնելու են այդ ծառայությունների գները, ինչն էլ ավելի ձեռնու կարող է դարձնել հայ արհանողների և ներմուծողների համար թուրքական փոխադրողների ծառայություններից օգտվելը:

Չրոսաբաբություն

Թուրքիայի Չրոսաբաբությունը ունի զգալի ներուծ և օգտագործում է կարողությունների միայն կեսը: Ավելի մեծ թվով այցելուների դեմքում երկիրը կարող



է նվազեցնել մեկ այցելուի հաշվով ծախսերն ու զները և ավելի գրավիչ դարձնել զբոսաբերությունը Թուրքիայում: Թուրքիայի զբոսաբերությունը մտահոգիչ է գնալին ու որակական հարաբերական առավելությունների առումով, ինչը կարող է վնասել Հայաստանի զբոսաբերության հասվածին ու սղասարկող ծառայությունների ճյուղերին: Զբոսաբերիկների արտահոսքը զուգակցվելով արտաբերության արտահոսքի հետ կարող է նաև լրացուցիչ ճնշում ստեղծել վճարային հաշվեկռի վրա:

Թուրքիայի կառավարությունը խթաններ է շնորհում զբոսաբերային ներդրումների համար, զբոսաբերության համար սրամադրում է ենթակառուցվածքային ու հասարակական ծառայություններ, սահմանում է զբոսաբերային բարձր ներուժ ունեցող գոտիները, որոշումներով հրադարակում է ընդհանուր զբոսաբերային կենտրոնները կամ սարածիները, մշակում և հաստատում է հողօգտագործման ղյանները, անց է կացնում Երջակա միջավայրի վերահսկողություններ, գովազդում է

երկիրը արտասահմանում, կատարում է հետազոտություններ ու հավաքում է վիճակագրություն և սրամադրում մասնագիտական վերադաստատում:

Հայաստանի արտագնա զբոսաբերության կեղծը ներմուծումներում մոտ 2,5 անգամ ավելի մեծ է, քան Թուրքիայի այդ ցուցանիշը, ինչը կարող է վկայել զբոսաբերության ներքին առաջարկի հարաբերականորեն ավելի ցածր մրցունակության մասին: Թուրքիայի զբոսաբերության կեղծը արտահանումներում հարաբերականորեն ավելի մեծ է: Պատկերը կրկնվում է ճամփորդության ծառայությունների առնչությամբ: Հայաստանում անհրաժեշտ է խթանել ենթակառուցվածքների զարգացումը և ըստ Երջանների հավասարակշռված մոտեցում ցուցաբերել: Աշխուժացման ամիսներին մահճակալների ղակապը կարելի է մեղմել սարվա ընթացքում զբոսաբերիկների հավասարաչափ բաշխումով՝ գովազդելով Հայաստանը և ուժեղացնելով առաջարկը ցածր ղակահանգարկ ունեցող ամիսների համար: Ոլորտի մրցունակությունը բարձրացնելու համար ղեկ է մեծացնել աջակցության չափն ու որակը՝ ենթակառուցված-

քային ներդրումների ու սղասարկման ոլորտներում ՓՄՁ-ների խրախուսման և սեղեկատվական սեխնոլոգիայի կիրառման խթանման ուղղություններով:

Այստիպով, ամփոփելով վերոնշյալ դիտարկումները, անհրաժեշտ է փաստել, որ ի լրումն Թուրքիայի սնեխությունների ավելի բարձր հնարավորությունների, երկիրը նաև ունի ներքին արտադրողների ղակաբանության բարձր մակարղակ: Թուրքիան նաև ակտիվորեն կիրառում է արտադրողներին և արտահանողներին խթանելու բազմաղակ միջոցներ, որոնք էլ ավելի անհավասար մրցակցային ղակամաններ են ստեղծում հայ և թուրք սնեխավարող սուբյեկտների համար՝ հոգուս վերջիններիս: Ուստի, Հայաստանում ևս ղեկ է հնարավորինս հավասար ղակամաններ ստեղծել թուրքական գործարարների համեմատությամբ, առավելագույնս բարելավել գործարարության աջակցության համակարգը, ինչղեխ նաև կատարելագործել Եուկայում վերահսկողության, հակազնագցման, փոխհատուցման և ղակաբանական համակարգերի գործունեությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը, Հայաստանի Հանրաղեսությունը ղեկ է ձևավորի հայ-թուրքական սահմանի վերաբազման իր դիրքորոշումն ու բանակցային դիրքը, մշակի բարեփոխումների համաղակասության փաթեթ ու իրականացման ռազմավարություն և հետևողականորեն իրականացնի ծրագրածը: Նշված միջոցառումները կարող են օգտակար լինել ոչ միայն հայ-թուրքական սահմանի վերաբազման համատեղման, այլ նաև ՀՀ օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգի բարելավման գործում, ինչն անհրաժեշտ է սնեխական կայուն զարգացման և միջազգային առևտրատեխական միջավայրում արղյունավեխ մասնակցության համար:

Տրապիզոնի հայոց տեղահանության և կոտորածների դատական նիստերի արձանագրությունները

Մելինե ԱՆՈՒՄՅԱՆ

Տրապիզոնի հայ բնակչության տեղահանման ընթացքում կազմակերպված ջարդերը վկայվել են ոչ միայն հայ և օտար ականատեսների հուշագրություններում, այլև Կոստանդնուպոլսում 1919 թ. մարտի 26-ից մայիսի 20-ը թվով 20 նիստի շրջանակներում իրականացված Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների դատաքնության նյութերում:

Տրապիզոնի դատավարության սկզբում ամբաստանվել են 7 հոգի՝ հարկային տեսուչ Մեհմեդ Ա-

լին, ոստիկանապետ Նուրին, գաղտնի գործակալ Մուստաֆան, գավառապետ Թալաաթը, հյուրանոցատեր Նիազին, բժիշկ Ալի Սալիբը և երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Յուսուֆ Ռ-ըզան: Վերջինիս գործը Տրապիզոնի դատաքնության 16-րդ նիստում (1919 թ. մայիսի 5) առանձնացվել և քննվել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատական գործընթացում: Տրապիզոնի դատավարության ժամանակ հեռակա կարգով քննվել են նաև Տրապիզոնի նա-

հանգապետ Ջենալ Ազմիի և «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբահչեյի Նալիլի գործերը:

Պետք է նշել, որ Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում հանդես եկած վկաները հիմնականում եղել են թուրքեր և այլ ազգությունների պատկանող մահմեդականներ: Բացի այդ, Տրապիզոնի դատավարության ընթացքում վկայություններ են տվել բարձրաստիճանի այնպիսի պաշտոնյաներ, ինչպիսիք են Վանի նախկին նահանգապետ Նազրմը, Էրզրումի նախկին նահանգապետ Թահսինը, Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար Ավնին, իրավական տեսուչ Քենանը, Տրապիզոնի և Լազիստանի գործերի շտաբի պետ, գնդապետ Մուհթարը, լեյտենանտ Ահմեդը և շատ ուրիշներ:

Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում լաված վկաների ցուցմունքների շնորհիվ լիովին հաստատվեց, որ այստեղ տեղի ունեցած ջարդերը, թունավորումները, ջրախեղդ անելու գործողություններն ուղղորդվել են Տրապիզոնի նահանգապետ Ջենալ Ազմիի կողմից, որն իր հերթին հրահանգներ էր ստացել կենտրոնական կառավարությունից:

Թուրքական ռազմական արտակարգ ատյանը 1919 թ. մայիսի 22-ին կայացրած դատավճռով Տրապիզոնի նահանգապետ Ջենալ Ազմիին և կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբահչեյի Նալիլին հեռակա կարգով դատապարտել է մահվան, Մեհմեդ Ալիին՝ 10, իսկ Մուստաֆային ու Նուրիին՝ 1 տարվա ազատազրկման:

1912-1921 թվականներին Կոստանդնուպոլսում հրատարակված օսմանատառ «Ալեմդար» օրաթերթը եղել է նաև Տրապիզոնի դատաքննությանն առավել ակտիվ արձագանքող օրաթերթերից մեկը, որի համարներում տեղ են գտել ինչպես սույն դատավարության ընթացքի վերաբերյալ տեղեկատվություններ, այնպես էլ վերլուծական բնույթի հրապարակումներ:

Ստորև թարգմանաբար ներկայացնում ենք Տրապիզոնի նահանգում իրականացված հայոց կոտորածներին վերաբերող դատաքննության մի շարք նիստեր՝ արձանագրված «Ալեմդարի» կողմից:

«Ռազմական արտակարգ ատյանում»

«Տրապիզոնի տեղահանության եկուտորածների դատավարությունը»

Երեկ ժամը 13:30-ից ռազմական արտակարգ ատյանում Նազրմ փաշայի նախագահությամբ շարունակվեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց հետո ընթերցվեց քաղաքացիներից մեկի ընկերուհու՝ տիկին Սիրանուշի գրավոր ցուցմունքը: Հայցվորը, հայերի հանդեպ կատարված բռնությունների մասին խոսելով, տեղեկացնում էր, թե բռնագաղթից փրկվելու նպատակով որոշ ժամանակով իսլամ է ընդունել, «Միություն և առաջադիմություն» կուսակցության որոշ անդամներ (որոնց անունները չէր կարողանում մտաբերել) տղամարդկանց բռնագաղթեցնելուց հետո բռնությունների էին ենթարկել նրանց, կանանց տղամարդկանցից առանձնացրել էին, այդ օրվանից ինքը չէր տեսել ո՛չ ամուսնուն, ո՛չ էլ ազգականին: Հայցվորը նաև հայտնում էր, որ վերցրել էին իր մոտ գտնվող մետաղյա դրամները, և որ կատարված վայրենությունը կրկին վերականգնվում էր իր աչքի առաջ:

Մեղադրյալներից կայմական Թալասթ բեյը, ուռքի ելնելով, հայտարարեց.- Այդ կինը, որի վկայությունները քիչ առաջ ընթերցվեցին, հայտնում է, թե Տրապիզոնում այսպիսի բան է կատարվել, այնտեղ գտնվող կուսակցությունը այնպիսի որոշում է ընդունել և այլն: Մինչդեռ պետք է նշել, որ այդ գործը խիստ գաղտնի բնույթ էր կրում: Ինչպե՞ս կարող էր այդ կինը տեղյակ լինել նման կարևոր որոշումների մասին:

Թալասթ բեյի վերոհիշյալ խոսքերից հետո

նրան մի քանի հարց տվեցին: Մասնավորապես դատարանի կազմի անդամներից Մուստաֆա փաշան նրան դիմեց հետևյալ կերպ. «Երկրում տեղահանությունն իրականացնելիս անհրաժեշտ էր, որ կատարելիք թե՛ Ձեր պաշտոնից և թե՛ մարդկային խղճից բխող պարտավորությունները»: Թալաաթ բեյը տվեց հետևյալ պատասխանը. «Ըստ էության, ես ժանդարմերիայի տեսուչ եմ: Քանի որ իմ պաշտոնական պարտականությունները բազմաբնույթ են, նման գործերով զբաղվելու ժամանակ չեմ կարողացել գտնել և, բացի այդ, դրանում ես պատասխանատու չեմ ու չեմ էլ կարող լինել»:

Այնուհետև ընթերցվեցին հետաքննչական հանձնաժողովին ներկայացած մի հայցվոր կնոջ ցուցմունքները, համաձայն որոնց՝ Ջեմալ Ազմի բեյը, տղամարդկանց հավաքելով, նրանց նավակներով Քում Քալե ուղարկելու հրահանգ էր տվել: Տեղափոխության ընթացքում բոլորին ոչնչացրել էին՝ մի մասին գնդակահարելով, մյուսներին՝ ջրախեղդ անելով: Կինը նշել էր նաև, որ Վարդան անունով ոմն իրեն մեկնաբանություններ էր տվել, հետագայում այս Վարդանին վիրավոր վիճակով հիվանդանոց էին տարել, որտեղ և թունավորել էին նրան: Գաղթականների երեխաների մի մասին ուղարկել էին Դեյիրմենդերեի ուղղությամբ, իսկ մյուս մասին, Նիազի էֆենդու ղեկավարությամբ նավակներով հեռացնելուց հետո, ծովն էին նետել: Իսկ ինքը կարողացել էր մահվանից խուսափել՝ նախ թուրքերի տանը, ապա՝ գերմանական բանկում թաքստոց գտնելու շնորհիվ:

Նախագահ (դիմում է մեղադրյալներին).- *Որևէ ասելիք ունե՞ք:*

Մուստաֆա բեյ.- *Էֆենդի՛, ինչ դիմած գաղթականների մեծ մասին փրկել եմ և անթերի կերպով հանչնել ինչ վստահված իրերը:*

Նախագահ.- *Որոչ նահանգներում գործն ուսումնասիրվել է, իսկ ինչո՞ւ Տրապիզոնում չեն խորացրել գործի էության մեջ:*

Մուստաֆա բեյ.- *Ես տեղյակ չեմ՝ մյուս նահանգներում գործն ուսումնասիրվել է, թե ոչ: Ըստ էության, մի՞թե կարելի է դրա համար կառավարու-*

թյանը քննադատել:

Դատախազ.- *Մենք տեղեկություններ ունենք առ այն, որ Հայունկ կազմակերպության մեջ պահեստային պաշտոնյայի տիպի ծառայություն է եղել:*

Մուստաֆա բեյը, իր պաշտոնավարության վերաբերյալ երկար-բարակ տեղեկություններ տալուց հետո, խոսեց «Թյուրքիանիք» թերթում իր դեմ եղած հրապարակումների մասին:

Դատախազ.- *Մթերքի և նման այլ բաների համար նահանգապետի նախագահության տակ որևէ հանչնաժողով եղե՞լ է:*

Մուստաֆա բեյ.- *Ո՛չ, էֆենդի, նման հանչնաժողով գոյություն չի ունեցել:*

Այնժամ դատախազը հայտնեց, որ տրապիզոնցի հարյուրապետ Մեհմեդ Ալի բեյի կողմից մի տեղեկագիր է ստացվել, և այն ներկայացրեց նախագահին:

Նախագահ.- *Ընթերցված ցուցմունքների դեմ որևէ առարկություն ունե՞ք:*

Նիազի բեյ.- *Հերկյալ կերպ կարող եմ հերքել երեխաներին ջրաղացը նետելու կամ էլ Դեյիրմենդերե ուղարկելուց հետո ոչնչացնելու՝ ինչ ուղղված զրպարությունները. այդ դեպքերի ընթացքում ես գտնվել եմ Սրամբուլում: Այդ փաստը կհաստատվի, եթե այդ ուղղությամբ կատարվի հետաքննություն:*

Այնուհետև ընթերցվեց ռազմածովային նախարարությանը ներկայացված տեղեկագրին որպես պատասխան բերված տեղեկանքը, ըստ որի Նիազի էֆենդին 330 թ. մայիսի 25-ին տորպեդայով հասել է Ստամբուլ: Այս Նիազի բեյը հանդես եկավ մի շարք մանրամասնություններով, որից հետո նախագահին դիմեց հետևյալ խոսքերով. «Մեծարգո՛ նախագահ, այդ բոլոր մեղադրանքները բացարձակապես չեն համապատասխանում ճշմարտությանը: Խնդրում եմ, այդ ուղղությամբ հետաքննություն կատարեք: Եթե այդ մեղադրանքներից գոնե մեկը հաստատվի, բոլորը ճշմարիտ կհամարեն և ինքս կխնդրեմ իմ պատիժը»:

Այնուհետև ընթերցվեցին Նիազի էֆենդու կողմից հետաքննիչ հանձնաժողովին ներկայացված ցուցմունքները: Նիազի բեյը մեկ անգամ ևս համառորեն ընդգծեց տեղահանության ժամանակ իր՝ Ստամբուլում

գտնված լինելու հանգամանքը:

Վկաներից դատարան հրավիրվեց Ավնի բեյը: Երդվելուց հետո նրան դիմեցին բազմազան հարցերով: Վերջինս հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. տեղահանությունը սկսվել է մի հայտարարության հիման վրա, և ղեկավարվել է դոկտոր Բեհադդին Շաքիր բեյի կողմից: Տեղահանության ընթացքում վալիի նախագահության ներքո որևէ հանձնաժողով չի եղել, բոլոր գործողություններին իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել վալին, գաղթականները ուղարկվել են հավաքական կերպով, որոշ խոսակցություններ են եղել նրանց վտանգների ենթարկվելու մասին, այդ բոլորը վերահսկել է ոչ թե ոստիկանությունը, այլ նահանգապետությունը, ինքը «Կարմիր մահիկ» հիվանդանոցում որևէ պաշտոն չի զբաղեցրել, հիվանդանոցում թունավորման դեպքերի մասին ոչինչ չի լսել, հիվանդանոցում Ալի Սայիբ բեյը վարել է առողջապահության տեսչի պաշտոնը, իսկ հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյը ընդգրկված է եղել «Կարմիր մահիկ» հիվանդանոցի հանձնաժողովի կազմում և իր պաշտոնական պարտականությունները կատարել է արժանապատվորեն:

Նախագահ.- Հայրենցիք, որ տեղահանության ընթացքում որոշ չարագործություններ են գրանցվել: Ինչո՞ւ չմիջամտեցիք՝ կատարելով Ձեր մարդկային պարտքը:

Վկա.- Չկարողացա միջամտել, էֆենդի՛:

Նախագահ.- Գործակալ Մուսրաֆա բեյն ընկերական կապեր ունեցե՞լ է նահանգապետի հետ:

Վկա.- Ընդհանրապես նահանգապետը ամենուր լինում էր և բոլորի հետ հանդիպում:

Առողջապահության տեսուչ Սայիբ բեյ.- Ինչ հասած լուրերի համաձայն՝ վկան այստեղ տեղափոխվելիս որոշ փաստաթղթեր է բերել. դա համապատասխանում է իրականությանը: Եվ արդյոք տեղյա՞կ էր, որ այդ փաստաթղթերում եղել է առողջապահության տեսչի ստորագրությունը:

Վկա.- Փաստաթղթերի բովանդակությանը

չեմ ծանոթացել:

Ժամանակի բացակայության պատճառով առաջին նիստն ավարտվեց ժամը 12:30-ին: Որոշվեց երկրորդ նիստն սկսել ժամը 14:00-ին:


4-րդ ապրիլի 1919, «Ալեմդար» օրաթերթ

«Ռազմական արտակարգ առյուծանում»

«Տրապիզոնի տեղահանության եւ կոտորածների դատավարությունը»

Երեկ ռազմական արտակարգ առյուծանում շարունակվեց Տրապիզոնի տեղահանության դատավարությունը: Նիստը սկսվեց ժամը 14:15-ին: Նախ հարցաքննվեց Գիրեսունի կայմական Արիֆ բեյը: Վերջինս հայտնեց, որ բացի Նիսադի բեյից, մնացած բոլոր մեղադրյալներին ճանաչում է, իր և նահանգապետի միջև ամեն բան պարզ է եղել, այդ իսկ պատճառով ինքը պաշտոնաթող է եղել, թեև Տրապիզոնում եղած ժամանակ իրեն որոշ խոսակցություններ հասել են առ այն, թե հայերը իրենց իրերը պահպանության հանձնելուց հետո հեռացել են, և որ որոշ ողբերգական դեպքեր են գրանցվել, սակայն ինքը ճշգրիտ տեղեկություններ չունի այդ մասին:

Ապա այդ օրը հրավիրված վկաներից նավահանգստի ղեկավար Ասըմ էֆենդին հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. «Վալին նավակներն այնպես էր տնօրինում, կարծես թե իրեն էին պատկանում, սահմանափակվում էր մեր գրասենյակի կողմից կատարվող ձևակերպումներով: Մենք բացարձակապես տեղյակ չէինք նավերի միջոցով կատարվող էվակուացիայի մասին, նավաստիներից ևս որևէ բան իմանալն անհնարին էր: Չէ՞ որ միայն իրպեսներին և իր գործին ձեռնառու մարդկանց էր ներգրավել: Ոչ ոք չէր կարողանում մի



ջամտել: Վալիի բռնակալությունը բոլորին այն աստիճան էր վախեցրել, որ, մեծարգո՝ փաշա, մեր փոխարեն եթե Դուք էլ լինեիք, դարձյալ չէիք կարողանա միջամտել: Ես վալիին ոչինչ չէի կարող ասել՝ պաշտոնս կորցնելու վախի պատճառով: Ես թիկունք չունեցող մեկն եմ: Օրինակ՝ գործակալ Մուստաֆա էֆենդին ևս պատվարժան մի անձնավորություն է, սակայն վալիի ահից հսկում էր նավերը»:

Այնուհետև, մեղադրող կողմի պահանջի հիման վրա վկային հարց տվեցին Ալի Սայիբ բեյի կողմից գիշերով երեխաներին մեծ կողովներով ուղարկելու մասին՝ համաձայն վկա Վերժինի՝ գիշերով կատարված տեղահանության առնչությամբ տված ցուցմունքի: Ի պատասխան՝ Ասրմ էֆենդին, իր խոսքը կրկնելով, հայտնեց, թե դա բացարձակ սուտ է, և որ ինքը այդ մասին տեղեկացել է տեղական թերթերից:

Վկա Ասրմ էֆենդուց հետո վկաներից դատարանի դահլիճ հրավիրվեց Տրապիզոնի նահանգային վարչության գրասենյակի ղեկավար Ֆուադ բեյը, որի ցուցմունքների համաձայն՝ ինքը տեղյակ չի եղել գաղտնի գործողությունների և փաստաթղթերի մասին, վիլայեթում երկու տեսակի գաղտնագիր կար, որից մեկին տիրապետում էր միայն վալին: Հավանական էր, որ տպարանում իր կողմից չնկատված որոշ բաներ տպվեին:

Ֆուադ բեյի՝ «Թանկարժեք իրերի հետախուզական հանձնաժողովի» կազմում ընդգրկված լինելու հանգամանքը նկատի ունենալով՝ նրան հարցրեցին վալիի կողմից գործակալ Մուստաֆա էֆենդուն տրված թանկարժեք զարդերով արկղիկի մասին: Վկան պատասխանեց, թե տեղյակ չէ:

Ապա որպես վկա հրավիրվեց եկամուտների տեսուչ Լյուսֆի բեյը: Պարզվեց, որ Լյուսֆի բեյը, «Լքված գույքի հանձնաժողովում» ընդգրկված լինելու շնորհիվ, չի աշխատել Ֆուադ բեյի հետ: Երկուսին էլ հարցաքննեցին թանկարժեք զարդերով արկղիկի կապակցությամբ: Լյուսֆի բեյն ընդգծեց, թե հանձնման և ընդունման գործողությունները հանձնողների ներկայությամբ չեն կատարվել. դա անհրաժեշտ չեն համարել՝ այդ մարդկանց խղճին վստահելով:

Ալի Սայիբ բեյին տրված հարցին ի պատաս-

խան՝ վերջինս պատասխանեց, որ 100.000 լիրայանոց զարդեղեն չի եղել, ինչպես դա պնդում էին Տրապիզոնում. այն հանձնաժողովին հանձնված զարդեղենը, որում ինքը ևս ընդգրկված է եղել, հազիվ 3-4.000 լիրա լիներ, իսկ մնացածի մասին ինքը տեղեկություններ չունի:

Նախագահին էլ նշեց, թե այստեղ ուղարկված զարդեղենի ընդհանուր գինը 1000 լիրայից քիչ է եղել, ցուցակները ներկայացվել են Ֆուադ բեյին, քանակի չարաշահումը լրիվ ապացուցվել է. այդ հանգամանքը ևս ցույց է տալիս նրանց անփութությունը: Ապա վկային հիշեցվեց, որ հաջորդ օրը զա՝ ցուցակը տեսնելու:

Այնուհետև դահլիճ բերվեց մյուս վկան՝ Ֆուադ բեյը: Վերջինիս հայտնեցին, որ զարդեղենը Տրապիզոնից Ստամբուլ է տեղափոխվել վիլայեթի ֆինանսների կառավարիչ Լյուսֆի բեյի միջոցով: Ֆուադ բեյը հերքեց այդ լուրը և վկայեց, որ նահանգային վարչության գրասենյակի ղեկավարը սեփական կարծիք չունեցող մի անձնավորություն է եղել, իսկ վալիին ուղեկցել է մի օրաքանվոր:

Վկան նաև հայտնեց, որ միայն ինքն է դեմ եղել Տրապիզոնում կատարված չարաշահումներին. եթե ինքն էլ չլիներ, ամեն ինչ կողոպտվելու էր: Բացի այդ, ըստ վկայի ցուցմունքների, զարդեղենի քանակը պետք է որ ավելին լիներ՝ նկատի ունենալով լքված գույքի մեծաքանակ լինելու հանգամանքը:

Ֆուադ բեյի ցուցմունքներից հետո ընթերցվեց տրապիզոնցի Մուրադի հետևյալ վկայությունը.

«Ականատես եմ եղել, թե ինչպես են Տրապիզոնից դուրս գալուց հետո նրանց բազմաքանակ իրերը, կտորներն ու աղամանդները վաճառվել: Այդ իրերն ընկել էին Նիսիի էֆենդու և նրա ընկերների ձեռքը: Նիսիի էֆենդին յուրացրեց իմ մոտորանավակը և վաճառեց Սինոպում: Դեֆթերդար բեյը ևս տեղյակ էր այդ մասին»:

Ապա դատախազի պահանջով հաղորդվեց, որ Մուրադը դատարան է ներկայացել ոչ թե որպես վկա, այլ՝ քաղիայցվոր, և որ նիսիի ավարտից հետո անդրադառնալու են նաև նրա հայցին:

Այնուհետև վկայությամբ հանդես եկավ երկրորդ

քարավանով Դալ Թաբան բռնագաղթեցված մադամ Միշտուհին, որից հետո վկաներից հարցաքննվեց տիկին Մանիկը:

Առաջինի՝ տեղահանության ժամանակ կատարված ողբերգական դեպքերի մանրամասն շարադրանքների և երկրորդի էլ՝ Ալի Սալիբ բեյի կողմից հիվանդանոցում կատարված չարագործություններին և մի կնոջ զննության ընթացքում ցուցաբերված բռնությանը վերաբերող ցուցմունքներին ի պատասխան՝ Ալի Սալիբ բեյը հայտարարեց. «Թեև մինչ այժմ անընդհատ ցուցմունքներ էին տալիս Նիազի և Ռըզա բեյերի դեմ, սակայն պարզվեց, որ նրանք տեղահանության ժամանակ ընդհանրապես բացակայել են քաղաքից. հիմա էլ սկսել են իմ նկատմամբ պահանջախնդրություն ունենալ»: Ապա Սալիբ բեյը ջանաց հերքել վկաների ցուցմունքները:

Այնուհետև դատարան հրավիրվեց հեռագրատան տեսուչ Ռ-յուշտի էֆենդին, որը հայտնեց, թե ինքը, տիկին Արսլանյանին որպես հոգեբույր ընդունելով, փրկել է նրան տարագրությունից, սակայն հաջողություն չի ունեցել երեխաներին ազատելու հարցում:

Ռ-յուշտի էֆենդին նաև վկայեց, որ տեղահանությունը ղեկավարվել է վալիի և Նալիլ բեյի կողմից, որ ինքը մեղադրյալներից բոլորին էլ ճանաչում է, սակայն տեղեկություններ չունի՝ նրանք տեղահանության գործին մասնակցել են, թե ոչ. նրանց տեսել է միայն իրենց վերաբերող գործերով զբաղվելիս:

Նիստն ընդմիջվեց ժամը 17:30-ին. շարունակվելու է չորեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

27-ը ապրիլի 1919, «Ալեմդար»

«Տրապիզոնի տեղահանության դատավարությունը»

Երեկ ժամը 13:45-ին ռազմական ատյանում Նազըմ փաշան շարունակեց Տրապիզոնի տեղահանության հետ կապված դեպքերի դատավարությունը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս տեղակալներից Նաքիբ բեյը:

Նախ դատարան կանչվեց և երդում տվեց վկաներից՝ Վանի նախկին վալի Նազըմ բեյը, որը տրված հարցերին պատասխանելով, հայտնեց, որ տեղահանության վերաբերյալ իր ունեցած տեղեկությունները հիմնականում հիմնված են խոսակցությունների վրա: Տրապիզոնի նախկին վալի Ջեմալ Ազմի բեյի և իր միջև եղած թշնամության պատճառով չի կարող նրա մասին վկայություններ տալ, մեղադրյալներից ճանաչում է Ռըզա և Մուստաֆա բեյերին, սակայն ոչինչ չի լսել նրանց՝ այդ գործերով զբաղվելու առնչությամբ: Լքված գույքի կապակցությամբ տեղեկացել է, որ հայերի գույքը տեղավորել են պահեստներում, դրանք խառնիխուռն վիճակում են եղել, իր եղած նախկին հանձնաժողովում ևս ցուցակները կարգավորված չեն եղել: Ծովում տեղի ունեցած անօրինականությունների մասին շատ բան է լսել, սակայն պատմել չի ցանկանում, քանի որ դրանք բոլորն էլ հիմնված են իրեն հասած խոսակցությունների վրա. ինքը ստույգ ոչինչ չգիտի:

Նազըմ բեյը ցուցմունքներ տվեց նաև նախկին նահանգապետ Ջեմալ Ազմի բեյի կողմից կատարված չարագործությունների և Նուրի ու Մեհմեդ Ալի բեյերի կողմից մի հայ կնոջ և երեխաներին ծովը նետելու մասին:

Այս վկայությունները տալուց հետո Նազըմ բեյը դուրս եկավ:

Դատարանի դահլիճ հրավիրվեց Տրապիզոնի վերաքննիչ դատարանի նախագահ Հիլմի բեյը: Վկան հայտնեց, որ ինքն ընդգրկված է եղել տարաբնույթ հանձնաժողովների կազմում, «Վաճառքի հանձնաժողովի» գործողությունների կանոնակարգումը կատարվում էր գրասենյակում: Հիլմի բեյը նշեց, թե վալին լավ մտադրություններ չի ունեցել. դրանով էր պայմանավորված տեղահանության հանձնաժողովի անկազմակերպ լինելու հանգամանքը:

Վերոհիշյալ ցուցմունքները տալուց հետո վկան նկարագրեց նաև հանձնաժողովում կատարված գործողությունները:

Այնժամ նախագահը հարցրեց. «Նման խճճված գործի մեջ ինչո՞ւ խառնվեցիք: Չէի՞ք կա-

րող հրաժարական տալ»:

Հիլմի բեյը պատասխանեց, որ իր հրաժարականի դեպքում, եթե այն ընդունվեր վալիի կողմից, բոլոր չարագործությունները կարող էին բացահայտվել: Վկան նաև նկարագրեց «Թանկարժեք իրերի հանձնաժողովի» գործողությունները և դրանց հանգամանքները, ապա հայտնեց, որ հայերից վերցված զարդեղենը նախ պահպանվել է թաղապետարանում, ապա լցրել են սնդուկների մեջ:

Հիլմի բեյը նշեց նաև, թե ինքը գանձարկղի մասին տեղեկություններ չունի, իսկ կուտակված զարդեղենի վերջնական արժեքը կարող էր 3-4.000 լիրա կազմել: «Թանկարժեք իրերի հանձնաժողովում» կատարված չարաշահումներին անդրադառնալով՝ վկան հայտնեց, թե ինքը տեղյակ չի եղել:

Ապա ընթերցվեց այդ գործի կապակցությամբ հարցաքննված վկա Նազըմ բեյի գրավոր ցուցմունքը, որի առնչությամբ հարցեր տրվեցին Հիլմի բեյին: Հետո դահլիճ բերվեց վերոհիշյալ Նազըմ բեյը, որը հայտնեց, թե ծանոթ չի եղել Հիլմի բեյի հետ, իսկ վերջինս նշեց, թե մեկ անգամ տեսել է Նազըմին:

Նազըմ բեյը ցուցմունքներ տվեց նաև վալիի կողմից արված հայտարարության առնչությամբ և դուրս եկավ:

Կրկին վերսկսվեց Հիլմի բեյի առանձին հարցաքննությունը: Կատարված ողբերգական դեպքերին անդրադառնալով՝ նախագահը շեշտեց Տրապիզոնի դատախազի միջամտության անհրաժեշտությունը: Ի պատասխան՝ Հիլմի բեյը հայտարարեց. «Չմիջամտեց և չէր էլ կարող միջամտել»:

Այնուհետև դատարան կանչվեց առողջապահության տեսուչ Սադրեթդին բեյը: Նրա անձնական տվյալները հրապարակելուց հետո հարցաքննությունն սկսվեց: Սադրեթդին բեյը ցուցմունքներ տվեց առ այն, որ տեղահանության ժամանակ ինքը Տրապիզոնում չի եղել և ոչինչ չի լսել ողբերգական դեպքերի մասին, ծանոթ է եղել Ալի Սայիբ բեյի հետ, սակայն վերջինս, վկայի ցուցմունքների համաձայն, ոչ մի առնչություն չի ունեցել «Կարմիր մահիկ» հիվանդանոցի հետ: Վկայի վերոհիշյալ ցուցմունքներից հետո մեղադրյալներից Ալի Սայիբ բեյը, ու-

քի կանգնելով, հայտարարեց, թե քանի որ վկաների ցուցմունքները ճշմարիտ են, ինքը ավելացնելու ոչինչ չունի, սակայն քանի որ վկաների ցուցմունքները ևս լիովին ապացուցված չեն, ապա տեսչի զեկույցը չի համապատասխանում ճշմարտությանը. թեև Սադրեթդին բեյը նախկինում ասել էր, թե իր կողմից Տրապիզոնում բավականաչափ կատարվելիք հետաքննությունը լավ արդյունք չէր կարող տալ, սակայն, ամբաստանյալ Ալի Սայիբ բեյի կարծիքով, Սադրեթդին բեյի այդ խոսքերը բխում էին նրա ունեցած քաղաքական վարդապետությունից և այդ համոզմունքով էին ասվել:

Դրանից հետո Սադրեթդին բեյը դուրս եկավ:

Ներս բերվեց նավագնացության գործակալության նախկին պաշտոնյա Էդիեմ Էֆենդին, որը երդում տալուց հետո հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. տեղահանության ժամանակ ինքը եղել է «Ռազմական փախադրումների հանձնաժողովի» նախագահը, բանակի հրամանատար Ավնի փաշան այդ գործը հանձնարարել էր վալիին, սակայն վերջինս առաջադրանքը, ինչպես հարկն է, չէր կատարել և այն հանձնարարել էր իրեն: Քանի որ Մուստաֆա Էֆենդին զինվոր էր, մթերք և ռազմամթերք էր առաքում Հատուկ կազմակերպությանը, ինչ վերաբերում է իրեն, ինքը ղեկավարել է ցամաքի միջոցով կատարվող առաքումը:

Վկան հայտնեց նաև, թե տեղահանության վերաբերյալ ինքը տեղեկություններ չունի, իսկ նավերը հեռացել են առանձին-առանձին:

Դատարանի կազմի կողմից հակասություն նկատվեց Էդիեմ Էֆենդու նախկին և այժմյան ցուցմունքների միջև: Պարզվեց, որ նա նախկինում հանդես է եկել Ալի Սայիբ բեյի դեմ ուղղված ցուցմունքով: Վկան նեղն ընկավ և շփոթվեց:

Այդ պահին ժամանակի բացակայության պատճառով նիստն ավարտվեց. շարունակվելու է երկուշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

1-ր մայիսի 1919, «Ալեմդար»

«Ռազմական արտակարգ առջանում»

«Տրապիզոնի տեղահանությանը վերաբերող դատավարությունը»

Երեկ ժամը 14:20-ից շարունակվեց Տրապիզոնի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող գործի ուսումնասիրումը:

Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս Ֆերիդուն բեյը:

Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց անմիջապես հետո վկաներից հարցաքննության ենթարկվեց իրավական տեսուչ Քենան բեյը: Վերջինս հայտնեց, որ տեղահանության ժամանակ ինքն այնտեղ չի եղել, սակայն հետագայում, նախարարությունից ստացված հրահանգի հիման վրա, զբաղվել է Լազիստանի, Չափիկի և Տրապիզոնի տեղահանության գործի հետաքննությամբ: Սամսոնում իր գտնվելու ժամանակ ռուսների կողմից առաջին ռմբակոծությունն արդեն սկսված է եղել: Քենան բեյը նշեց, որ տեղահանության իրականացման հանգամանքների մասին ինքը տեղեկացել է միայն լսելով, իսկ տեղահանությանն անձամբ ակնատես է եղել Սամսոնում գտնվելու ժամանակ: Այդ տեղեկությունների համաձայն՝ Ջեմալ Ազմի բեյը բազմաթիվ չարագործությունների հեղինակ էր եղել. մասնավորապես՝ հայերին և հույներին նավերն էր լցրել և ոչնչացրել՝ ծովում խեղդելով: Ըստ վկայի ցուցմունքների՝ Ազմի բեյը հանդիսանում էր իր յուրաքանչյուր քմահաճույքն իրականացնող մի անձնավորություն:

Վկան հայտնեց նաև, որ թեև զորակոչին հետևած չարագործությունների կապակցությամբ հետաքննություն կատարելը կամ տեղի դատախազին այդ մասին տեղեկացնելն իր պաշտոնական պարտականությունների շրջանակներից դուրս էին և վերաբերում էին բանակի հրամանատարներին, այնուամենայնիվ ինքը կատարված չարագործությունների մասին բազմիցս հայտնել է տեղի դատախազությանը:

Վկան նշեց նաև, որ մեղադրյալներից ճանաչում է միայն Թալասթ և Մուստաֆա էֆենդիներին:

Երկրորդ անգամ որպես վկա դատարան կանգվեց Ռյուշտի էֆենդին, որին նախագահը հարց տվեց տիկին Արսլանյանի դրամի վերաբերյալ և հիշեցրեց միայն ճշմարտությունն ասելու պահանջի մասին: Ռյուշտի էֆենդին պատասխանեց, թե ինքը բացարձակապես տեղեկություններ չունի տիկին Արսլանյանի դրամի վերաբերյալ:

Նախագահ.- *Ասում են, թե այդ դրամը Դուք եք վերցրել:*

Ռյուշտի էֆենդի.- *Սամսոնում նպարեղենի խանութ ունեմ: Կարող եք այնտեղի ցուցակները ստուգել: Ես նման բան երբևէ չեմ վերցրել և դրա վերաբերյալ տեղեկություններ չունեմ:*

Նախագահ.- *Ինչո՞ւ եք համագործակցել Սայիբ բեյի հետ:*

Ռյուշտի էֆենդի.- *Չեմ համագործակցել: Նա երեխաներին էր զննում:*

Այդ պահին Ալի Սայիբ բեյը նույնպես որոշ բաներ ասաց այդ կապակցությամբ: Այնժամ Ռյուշտի էֆենդուն բազմաթիվ հարցեր տրվեցին դրա վերաբերյալ:

Խոսքին խառնվեց նախկինում վկայությամբ հանդես եկած և այդ պահին ունկնդիրների շարքում գտնվող Աբդուլլահ էֆենդին: Վերջինս նշեց, թե որոշ հանգամանքներ ինքը լավ չի մտաբերում: Նախագահը վերոհիշյալին հրավիրեց ամբիոնի մոտ՝ ցուցմունքներ տալու:

Աբդուլլահ էֆենդուն հարցեր տրվեցին տիկին Արսլանյանի դրամի վերաբերյալ, նաև թե ինչո՞ւ են թաքցնելու պահին նրանից իրեր և դրամ պահանջել:

Վկան պատասխանեց, թե, եթե չի սխալվում, նման նախաձեռնությամբ ինքը հանդես է եկել տիկին Արսլանյանին փրկելու պահին:

Նիստն ավարտվեց ժամը 15:30-ին. այն շարունակվելու է երեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

11-ր մայիսի 1919, «Ալեմդար»

Ազգային պետություն

ստեղծելու ճանապարհին

Վահան Դիլանյան



Ներկայումս աշխարհը պատված է շուրջ 200 ազգային պետություններով: Սակայն բոլորը չէ, որ ունեն էթնիկական հիմք. ի տարբերություն Արևելյան կիսագնդում գտնվող պետությունների, եվրոպական որոշ երկրներ ու ԱՄՆ-ը հիմնված չեն ազգային-էթնիկական սկզբունքերի վրա:

Փորձելով թերևս արդարացնել այդօրինակ պետությունների առաջացումը, սահմանենք ազգային պետությունների երկու՝ արևելյան և արևմտյան տիպեր:

Արևելյան տիպի դեպքում էթնիկական հիմքը գերակա է քաղաքացիականի նկատմամբ.

տվյալ ազգի անդամ է համարվում նա, ով պատկանում է այդ էթնոսին: Արևմտյանի դեպքում հիմնականում գերակա է քաղաքացիական հիմքը, այսինքն տվյալ ազգի անդամ կարող է համարվել նա, ով ընդունում է տվյալ պետության քաղաքացիությունը:

Այն հանգամանքը, որ ասիական պետություններն աչքի են ընկնում բարձր համասեռությամբ, իսկ արևմտյան պետությունները՝ բազմաթիվ էթնոսների առկայությամբ, հաստատում է վերոնշյալ թեզը:

Եվրոպական երկրները համարվում են ազգ-պետություններ, չնայած իրենց կազմում ունեն ազգային ընդհանրություններ, ինչպիսին են օրինակ՝ ֆլամանդացիները Բելգիայում կամ բասկերը՝ Իսպանիայում: Այդուամենայնիվ բասկերը ներկայումս կրում են իսպանական անձնագրեր, իսկ ֆլամանդացիները՝ բելգիական:

Ուստի մեր կողմից քաղաքացիական տիպի առանձնացումը՝ որպես արևմտյան պետություններին բնորոշ սկզբունք, ունի մեթոդաբանական նշանակություն՝ ասիական երկրների հետ համեմատության առումով. փաստ է, որ քաղաքացիականության գաղափարն անհամեմատ ավելի զարգացած է եվրոպական երկրներում, քան, ասենք, Հնդկաստանում կամ Չինաստանում են:

Համաձայնելով գելներյան այն կարծիքին, թե «ազգի իսկական պատմությունը սկսվում է այն ժամանակ, երբ նա սեփական պետություն է կազմում»¹, այնուամենայնիվ նշենք, որ ներկայումս կան ազգեր, որոնք ունենալով էթնիկական համասեռություն, դեռևս չեն

ստեղծել իրենց ազգային պետությունը և գտնվում են այլ պետությունների սահմաններում (շվեյցարացիներ, բասկեր, ֆլամանդացիներ ևն): Նրանց հետ մեկտեղ գոյություն ունեն նաև հազարավոր էթնիկական, լեզվական, կրոնական և մշակութային խմբեր (հատկապես մարդաշատ Հնդկաստանում, Չինաստանում, Ինդոնեզիայում և Աֆրիկայում), որոնք նույնպես ձգտում են ազգային պետության: Իսկ բոլորին անկախ պետության մակարդակով ինքնորոշում տրամադրելու պարագայում աշխարհի քաղաքական քարտեզը կձևախախտվի, և հետևանքները կլինեն կործանիչ:

Ուստի հստակ պետք է սահմանել անհրաժեշտ այն հատկանիշները կամ սկզբունքները, որոնք մարդկային հանրության ազգ են դարձնում:

Ազգը կարելի է սահմանել որպես մարդկային մի հանրույթ, որն ունի էթնիկական կամ քաղաքացիական հիմքով մշակութային ընդհանրություն և ազգային պետություն ստեղծելու միտում-ունակություն:

Փաստորեն, ազգային պետություն ստեղծելու համար անհրաժեշտ ենք համարել թե՛ կոլեկտիվ միտում ունենալու հանգամանքը և թե՛ անհրաժեշտ ունակության լինելությունը: Այլապես հազարավոր մարդկային խմբեր կան, որոնք ունեն էթնիկական ներհատուկ էություն, սակայն չունեն պետություն ստեղծելու բնական կոլեկտիվ ունակություն (օրինակ՝ քրդերը):

Առաջադրված հայեցակարգն առավել հանգամանալից պատկերացնելու համար բերել ենք

3 հիմնական մոտեցումներ, որոնց պարագայում կարող է միայն դրսևորվել «միտում-ունակությունը» կամ որոնց լինելության դեպքում կարող է միայն էթնոսը համարվել ազգ ու հավակնել ազգային պետության ստեղծման:

1) Պատմահոգեբանական մոտեցում

Մարդկային հանրության պատմական-հոգեբանական հիշողության մեջ վերապատկերվում է հայրենիք դարձած մի բնատարածք, որը, որպես այդպիսին, ազգային մտահայեցողության մեջ հանդես է գալիս իբրև պետություն (ազգային) կազմակերպելու երաշխիք ու հիմք:

Հայրենիք-բնատարածքի առկայությունն այս պարագայում պարտադիր է: Օրինակ՝ հայերն ԱՄՆ-ում որոշակի էթնիկականություն են դրսևորում (հայկական որոշակի արժեքների կամ դրանց պահպանման վերաբերյալ որոշակի շարժում): Սակայն այդ շարժումները, թեկուզ իրենց հզոր համալիր տեսքի մեջ, ազգայնական չեն կարող համարվել: Այլ կերպ ասած, ԱՄՆ-ը իրենց «ենթագիտակցական – կոլեկտիվ անգիտակցական» հայրենիքը չէ և այնտեղ ազգային պետություն ստեղծել չեն կարող:

Նմանատիպ օրինակ կարող է ծառայել և հրեական ազգի դեպքը. հաստատելով սեփական պետության կարևորությունը սեփական ազգի հետագա գոյատևման համար, 19-րդ դարի 90-ականների կեսերին հրեա-

1. Գելներ Էռնեստ, Ազգեր և ազգայնականություն. անցյալի նոր հեռանկարները, Երևան, 2002, էջ 65:


կան էլիտան քննարկում էր և Արգենտինայի դեպքը՝ որպես պետության ստեղծման հնարավոր վայր²: Այդ ժամանակ հրեական մեծաթիվ համայնք կար Արգենտինայում, որտեղ նրանք մեծ դերակատարություն ունեին, ի տարբերություն ներկայիս Իսրայելի, որտեղ այդ ժամանակաշրջանում ուղղակի հրեաներ չկային:

Կյանքը, սակայն, ցույց տվեց, որ ազգային պետության ստեղծման համար ազգի ենթագիտակցական կամ կոլեկտիվ անգիտակցական հիմքերն ավելի ուժեղ են և կենսունակ, քան արհեստաձին, բայց հզոր գործոնները:

2) Պատմական-էվոլյուցիոն

Համաձայն այս մոտեցման, ազգային պետության ստեղծման միտում-ունակությունը բացատրում ենք ազգի ինքնակառավարման մեխանիզմների էվոլյուցիայի օրինաչափությամբ: Այս պարագայում ազգային պետությունը հանդես է գալիս որպես «նոր» (նոր ժամանակների) նորմատիվային համակարգ:

Այսպես, տոհմացեղային հասարակության մեջ սոցիալական հարաբերությունները կարգավորում էին սովորույթները: Ստրկաֆեոդալական հարաբերությունների ձևավորման հետ բարդանում են հասարակության ինքնակառավարման կառույցները, առաջ է գալիս պետությունը՝ իր օրդիֆիկացված, կոդավորված օրենսգրքերով: Հասարակության քաղաքական համակարգն իր բարձրագույն զարգացմանը հասավ վաղ կապիտալիզմի ժամանակաշրջանում, երբ մարդկային հանրույթը, հանրագումարելով իր



Է. Պեյն

պատմական փորձը քաղաքական համակարգի վերակառուցման առումով, իր հետ առաջացրեց ազգային պետություն, ծավալեց ազգային-ժողովրդապետական-դեմոկրատական համակարգային գործընթացներ: Փաստորեն, մարդկային մի հանրույթի ինքնակառավարման մեխանիզմի կայացմանը նպաստում է նույն մարդկային հանրույթի պատմահոգեբանական հիշողությունը (տերիտորիայի արժեքով), քանզի պետությունը ամբողջանում է որոշակի տերիտորիայով:

3) Էթնոպաշտպան մոտեցում

Իր տեսակի պաշտպանության համար մղվող պայքարը

(հոգևոր և ֆիզիկական) սկզբնավորվել է մարդկային հասարակության առաջացման արշալույսին: Տակավին հին ժամանակներում էթնոսները հեռանում էին ներագոյնից: «Հետագայում երկրագնդի բնակեցման խտացմանը զուգընթաց, նման լուծումներն անհնար էին դառնում. էթնոսները ստիպված էին գտնել ներագոյնից հակադրվող կենսական նոր միջոցներ»³: Այդպիսի միջոցների դերում հանդես էին գալիս էթնիկական լեզուն, գիրն ու գրականությունը, ամուսնաընտանեկան հարաբերությունները, սովորույթները, ավանդույթները, մի խոսքով՝ արժեքների այն համակարգը, որի մի տեսակը զանազանվում էր մյուս տեսակից: Փաստորեն էթնոպաշտպան գործընթացները ծնվելով մարդկության պատմության վաղ շրջանում, անցնելով պատմական հոլովույթներով, ուրույն կերպով արտահայտվեցին «նոր» ժամանակներում:

«Նոր մակնիշի ձուլողական մեքենան» արմատապես ձևախախտում է ազգի ազգային մտահայեցողությունը՝ «ուժացման» (asimalatif) կառավարման ժամանակ հանրույթը բաժանելով սահմանային (marginal) եսերի՝ ստեղծելով հասարակական յուրաքանչյուր խմբի կառավարման խամաճիկային համակարգ»⁴: Այս առումով առանձնապես բարդ է և վտանգված այն ազգերի վիճակը, որոնք իրենց պատմական հայրենիքում տրոհված են երկու կամ ավելի պե-

2. Theodor Herzl, A Jewish State //The Nationalism Reader, ed. By Omar Dahbour and Micheline R. Ishay, Humanities Press, New Jersey, 1995, p. 131.

3. Քաղաքագիտության ներածություն, Հայաստանի իրավաբանների և քաղաքագետների միություն, Երևան 1996, էջ 211:

4. Մարգարյան Մ., Հոգևոր Հայաստանի գաղափարախոսությունը արդիականացման գործընթացում, Բազմավեպ հանդես, Երևան, 2004, էջ 199:

տությունների միջև և յուրաքանչյուրում հանդիսանում են ազգային փոքրամասնություն կամ ցրված են աշխարհով մեկ: Առավել ևս արևելյան միապետականության կամ ավտորիտարիզմի պայմաններում, երբ գերակա ազգը դժկամությամբ է վերաբերվում այն հանգամանքներին, որ իրենց պետությունը նաև այլ ազգերի հայրենիքն է:

Ազգային պետությունը հանդիսանում է էթնոպաշտպան այն հզոր համակարգը, որը կարող է դիմադրել «ձուլողական մեքենայի», գլոբալիզացիայի, ինտեգրացիայի, «համաշխարհային պետության» տեսական և իրական ձգտումներին:

Ուշագրավ է Է. Գելների այն կարծիքը, որ բարձր մշակույթը՝ արդյունաբերական ժամանակաշրջանի մշակույթը, հիմա արդեն հույժ կարիք ունի քաղաքական աջակցության հիմքին⁵: Այն չի գոյատևի առանց քաղաքական ինֆրակառույցի: Ինչպես որ «No orchids for miss Bandish» գործի մի հերոսն է ասում. «Լավ կլինի, որ ամեն աղջիկ ամուսին ունենա, ու լավ կլինի, որ այդ ամուսինն աղջկա սեփականը լինի»: Եվ ահա, հիմա ամեն մի մշակույթ պետության կարիք ունի, ու լավ կլինի, որ դա իր իսկ պետությունը լինի⁶:

20-րդ դարի երկրորդ կեսին, երբ ապագադրության աման գործընթացը հասել էր իր գագաթնակետին, առաջ եկան մի շարք արհեստական պետություններ, որոնք չկարողացան խուսափել ներքին պակասակազմից:

Իսկապես, աշխարհի երկրների մոտ 73%-ը անկախություն են ստացել Երկրորդ

«Հենց այս պետությունների առջև է այսօր ծառայել տարածքային ինստիտուտներն ազգային բովանդակությամբ լցնելու հիմնախնդիրը: Նրանց կոլեկտիվ պատմական հիշողությունը սահմանափակվում է գաղութային կառավարման ընդհանուր փորձով և անկախության համար մղած պայքարով: Այս երկրներում ազգային շինարարության առջև դրված է կրկնակի խնդիր՝ ստեղծել այնպիսի մշակութային ինքնություն, որը կհամարվի նոր քաղաքական կազմավորում ու կարտահայտի ամբողջ բնակչության համար ընդհանուր հատկանիշներ, և միաժամանակ խուսափել մշակութային որևէ սեգմենտի հետ պետության նույնացումից, ինչն անխուսափելիորեն սպառնալիքի տակ կդնի մնացած խմբերի ինքնությունը»⁷:

համաշխարհային պատերազմից հետո՝ հաճախ քաղաքական գործոնների կամ շահերի ազդեցության պայմաններում:

Այդ երկրներից մի քանիսը ստեղծեցին քաղաքական համա-

կարգեր, որոնք կարողացան բավարարել իրենց քաղաքացիների ակնկալիքներն ու կարիքները, այդ իսկ պատճառով հարաբերականորեն կայուն են: Ցավոք, շատ երկրներ (օրինակ՝ Կամբոջան, Ռուանդան, Սոմալին, Եթովպիան), անկախություն ստանալուց հետո, բազմիցս փոխեցին իրենց քաղաքական համակարգերը, և այժմ նրանք դեռ պետք է գտնեն սեփական պետական կառուցվածքի այնպիսի մոդել, որն արդյունավետ կլինի, հետևաբար՝ երկարակյաց:

Արհեստական ազգային պետության յուրատեսակ օրինակ է Ադրբեջանական պետությունը. Արևելյան Անդրկովկասի բուրք-բաթարական էթնիկական խմբերի և Թուրքիայի օգնությամբ ստեղծվեց պետություն՝ անվանվելով Ադրբեջան՝ «Ազերբայջան»: «Սրա մտավորական վերնախավը ձեռնամուխ եղավ այդ ժողովրդի համար հետին թվով մի փառավոր պատմություն և անցյալի մի բարձրարվեստ մշակույթ սարքելու գործին՝ որպես աղյուսներ օգտագործելով ուրիշ ժողովուրդների մշակույթների այս կամ այն մասը: Այդպես էլ Նիզամին, Մովսես Կադանկատվացին դարձվեցին ադրբեջանցի, Արցախը՝ Ադրբեջանի մաս»⁸ և այլն: Պատմության այս և այլ վերաշարադրանքների «ապացուցողական» ուժը թերևս ուղիղ համեմատական է դրանց վրա կատարված ծախսերին: Մզկիթ

5. Գելներ Էռնեստ, նշված աշխատությունը, էջ 67:

6. Նույն տեղը, էջ 68:

7. Крауфорд Янг. Типология культурных основ государств Этнос и политика, хрестоматия, авт. сост. А.А. Прусауска, М., 2000 с. 158-159.


8. Գևորգյան Հ. Ա., Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, Երևան, 1997, էջ 25-26:

դարձված հայկական եկեղեցին աղբյուրաբանական չի դառնում, որքան էլ գրքեր գրվեն հակառակը ապացուցելու համար:

Հատկապես «երրորդ աշխարհի» տեսաբանների կողմից արհեստական ազգային պետության օրինակների շարքին է դասվում և Ամերիկայի Միացյալ Նահանգները: Նրանց փաստարկային հիմքը առանձին էթնիկական տարրի բացակայության գաղափարն է:

Բայց, ինչպես վերը նշեցինք, կան և՛ քաղաքացիական (իհարկե, սեփական մշակույթով), և՛ էթնիկական (հնարավոր է և քաղաքացիական տարրը ներառող) ազգեր: Սահմաններն ան, որ ամեն մի քաղաքացիական հիմքով ազգ էլ ունի էթնիկական հիմքային անցյալ, որը, սակայն, իր «սեփական-ներհատուկը» չէ. ի վերջո, բոլոր հանրություններն էլ ունեն որոշակի անցյալ, օրինակ՝ ամերիկյան ազգը՝ անգլոսաքսոնական էթնիկական ընտանիքի մակարդակով, ևն:

Ավելին, Մեյնոր Մարտին Լիպսետը հաստատում է, որ աշխարհում ամերիկացիներն են առաջինը եղել «նոր ազգ», նկատի ունենալով, թե այն հիմնախնդիրները, որոնց հետ բախվել են ԱՄՆ-ի քաղաքացիները՝ Մեծ Բրիտանիայից 1783 թ. անկախություն ստանալուց հետո ստեղծելով կայուն ու ամուր սկզբունքների վրա հիմնված քաղաքական համակարգ, շատ պարամետրերով նման են այն հիմնախնդիրներին, որոնք դրված էին 1945 թ. հետո հայտնրված պետությունների առաջ. ամերիկյան պետությունը, անկախ այն բանից, որ նրան անվանում են «երիտասարդ», իրականում ավելի մեծ է ժամանակակից այլ պետություններից,



Մեյնոր Մարտին Լիմուտիս

չնայած, իհարկե, հիմնադրվել է ավելի ուշ, քան, օրինակ, Բրիտանիան, Ֆրանսիան կամ Ճապոնիան: ԱՄՆ-ի Սահմանադրությունը նշված երկրների սահմանադրությունների շարքում ամենահինն է աշխարհում: Ամերիկացիները լիիրավ կարող են հաստատել, որ Ժողովրդավարությունն իրենց երկրում հաստատվել է ավելի վաղ (աշխարհում առաջին անգամ քաղաքական կուսակցությունները հայտնվեցին ԱՄՆ-ում 18-րդ դ. 90-ական թթ.), քան ցանկացած այլ ժամանակակից ու հզոր պետությունում:

Որպես ազգային պետություն ստեղծելու ձգտման օրինակ՝ ուշագրավ են ազգային ազատագրական շարժումները:

Բաբելոնյան աշտարակաշինությամբ սահմանված աշխարհն, անշուշտ, այլ տեսք պետք է ունենար: Իսկ այսօր ավելի քան 5000 ռասայական, էթնիկական, լեզվա-

կան, կրոնական և մշակութային խմբեր մտնում են շուրջ 200 ազգային պետությունների կազմի մեջ:

Մեծապետական համակարգերը, սակայն, պայքարում են ազգային ազատագրական շարժումների և ազգային անջատողականության դեմ:

ԱՄՆ-ը դիվանագիտական ռազմատնտեսական օգնություն է ցույց տվել Իսրայելին Պաղեստինի դեմ պայքարում, Ինդոնեզիային, որը փորձում էր իրեն միացնել Իրիան Ջայա պապուասներին և Արևելյան Թիմորը, Կոնգոյին, որը պայքարում էր Կաթանգայի անջատողականների դեմ: ԽՍՀՄ-ը նույն ձևով օգնում էր սոցիալիստական ճամբարի երկրներին՝ Հարավսլավիային, Չեխոսլովակիային ևն:

Սեփական բնակչության դեմ պայքարող պետությունները շատ դեպքերում օժանդակություն են ստանում զարգացող երկրների կողմից: Այսպես, Կուբան օգնում էր Եթովպիային՝ 1973-1990 թթ. ու Անգոլային՝ 1975-1990 թթ., Հնդկաստանը՝ Շրի Լանկային 1987-1990 թթ. ևն: (Անշուշտ, պետք է նշել, որ աջակցության վերոնշյալ օրինակները նաև պայմանավորված են եղել Մառը պատերազմի հանգամանքով):

Մտահոգված աշխարհի քաղաքական քարտեզի ձեվախախտման հնարավորությունից՝ ազգային շարժումները զսպելու գործում մեծ դերակատարություն ունեն նաև միջազգային այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՆԱՏՕ-ն, ԵՄ-ն ևն: Հայտնի օրինակ է Սոմալին, որը տրոհումից խուսափեց

միայն ՄԱԿ-ի, ինչպես նաև ԱՄՆ-ի օգնությամբ:

Ազգային ազատագրության գաղափարա-իրավական հիմքը ազգերի իրավունքների սկզբունքն է:

Վերջինիս փաստաթղթային ինստիտուցիոնալիզացիան առաջին անգամ տեղ գտավ (20-րդ դարում) «Վիլսոնի 14 կետերում»:

Միջազգային իրավունքի այս կարևորագույն սկզբունքը հաստատում է, որ բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք. բոլոր ժողովուրդներն ազատորեն կարող են որոշել իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնել իրենց տնտեսական, սոցիալ-մշակութային զարգացումը: Իրավունքը ներառում է նրանց ինքնիշխանությունը (սուվերենիտետը) բնական ռեսուրսների և հարստությունների նկատմամբ:

Ազգերի ինքնորոշման իրավունքը ավելի քան 30 տարի է, ինչ հանդիսանում է միջազգային իրավունքի պարտադիր, հիմնարար սկզբունք: Մարդու իրավունքների մասին ՄԱԿ-ի երկու կարևորագույն պակտերի՝ «Քաղաքացիական իրավունքների մասին» պակտի և «Սոցիալական իրավունքների մասին» պակտի 1966 թ. ներածական հոդվածների համաձայն՝ ազգերն ինքնորոշման իրավունքի հիման վրա ազատ կերպով որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1970 թ. «Բարեկամական հարաբերությունների մասին» հռչակագրում ճշգրտվում է, որ քաղաքական կարգավիճակի հարցը լուծելիս խոսքը կարող է գնալ անկախ և

սուվերեն պետության ստեղծման, այլ անկախ պետության հետ միավորման կամ այլ կարգավիճակի տրամադրման մասին:

Ազգերի իրավունքների քաղաքական արտահայտիչները հիմնականում քաղաքական կուսակցություններն են, որոնք իրենց նպատակներին հասնելու համար պետք է օգտագործեն համակարգի ներսում լեգիտիմ համարվող միջոցներ՝ ընտրություններ, հանրաքվեներ, ցույցեր, երթեր, գործադուլներ ևն: Թեև այսօրինակ ազատ գործունեություն հնարավոր է նաև քիչ թե շատ զարգացած ժողովրդավարական երկրներում: Օրինակ՝ Քվեբեկյան կուսակցությունը Կանադայում, Ֆլամանդական բլոկը Բելգիայում, Շոտլանդական ազգային կուսակցությունն ու Ուելսի կուսակցությունը Մեծ Բրիտանիայում ևն:

Ա. Մարգալիտը և Ջ. Ռազը փորձել են թվարկել այն 6 հատկանիշները, որոնք ինքնորոշման իրավունք են տալիս խմբին: «Ի՞նչն է, որ ժողովուրդներին դարձնում է ինքնորոշման իրավունք ունեցող... մենք կարող ենք հարցի էությունը պարզել՝ համեմատելով նրանց այլ խմբերի հետ. օրինակ՝ գեղարվեստական գրականություն կարդացող հասարակության կամ «Տոտենհեմ» ֆուտբոլային ակումբի երկրպագուների հետ, որոնք ակնհայտորեն չունեն այդպիսի իրավունք: Այսպիսի օրինակներից կարելի է ենթադրել, որ կան մարդկային խմբերի 6 հատկանիշներ, որոնց առկայությունը թույլ է տալիս խոսել ինքնորոշման մասին: Դրանք են.

1. Խումբն ունի ընդհանուր բնութագիր և մշակույթ:

2. Խմբի անդամները մեծանում են խմբի ներսում, դառնում խմբի մշակույթի և հատկանիշների կրողը:

3. Անդամակցությունը խմբին մասամբ փոխադարձ ճանաչման խնդիր է:


4. Սովորաբար ուրիշների վարքագիծը մեկնաբանելիս մարդկանց համար առաջնային բանալի է հանդիսանում նրանց անդամակցությունը խմբին:

5. Անդամակցությունը պատճառ է պատկանելիության և ոչ թե ձեռք բերման:

6. Սրանք փոքր խմբերը չեն, որոնց անդամները սովորաբար ճանաչում են միմյանց: Դրանք անանուն խմբեր են, որտեղ փոխադարձ ճանաչումը ապահովվում է ընդհանուր հատկանիշներ ունենալու միջոցով»⁹:

Ազգային պետության մակարդակով ինքնորոշման ձգտող մարդկային հանրույթը, այնուամենայնիվ, պետք է ունենա ազգին բնորոշ վերոնշյալ հատկանիշները: Հատկապես Ասիայում, երբ քաղաքացիական սկզբունքը դեռևս զարգացած չէ և գերակա էթնոսի առկայությունն անհրաժեշտ է:

9. Margalit Avishai, Joseph Raz. National self-determination, Journal of Philosophy LXXXVII, 9, 1990. 439-446: pp. 443-447.



Է. Հոբսբաում

«Գերակա էթնոսը» բնութագրվում է նրանով, որ տվյալ ազգի լեզուն և մշակույթը կատարում են նորմատիվային գործառույթ, ծայրահեղ դեպքում՝ հրապարակային ոլորտում՝ լուսավորության և կրթական համակարգում, և այլն:

Ազգային պետություններն իրականում կարիք ունեն ոչ թե էթնիկական բարձր համասեռության, այլ տվյալ պետությունը ստեղծած, գերակա ազգի էթնոմշակութային արժեքներով սահմանակարգված հասարակական դաշտի: Բանգի եթե առաջնորդվենք միաէթնիկության սկզբունքով, այլ լուծումներ կստանանք:

Օրինակ, «ծայրահեղ բնույթի ազգայնականությունն իսկապես ձգտում է ստեղծել այդպիսի համասեռ պետություն, այսինքն ոչ թե ազգային,

այլ ազգայնական պետություն՝ իրեն բնորոշ ցեղախտությամբ, ցեղասպանությամբ, բռնագաղթերով, ուժացումով»¹⁰: Երիցս իրավացի է Է. Հոբսբաումը՝ գրելով. «Միատարր տարածքով ազգային պետություն կարող էին իրականացնել միայն բարբարոսները, առնվազն բարբարոսական միջոցներով»: Նա բերում է հիտլերյան Գերմանիայում հրեաների ջարդը, իսկ ապա՝ Լեհաստանից և Չեխոսլովակիայից՝ գերմանացիների արտաքսման օրինակը¹¹ (կարող էր բերվել նաև մի հին, բայց ամենևին չհնացած օրինակ՝ Հայոց ցեղասպանությունը):

Ներկայումս ազգային պետությունների համար անհրաժեշտ է զարգացնել ազգայնությունը՝ որպես ազգային շահերն ամփոփող համակարգ:

Ազգայնությունը պետք չէ շփոթել կամ նույնացնել ո՛չ վերը

նկարագրված ազգայնականության և ո՛չ էլ շովինիզմի հետ: Վերջինս առաջացել է ֆրանսերեն «Chauvinisme» բառից, որին բնորոշ է ազգային բացառիկության, մի ազգերի շահերը մյուս ազգերի շահերին հակադրելու, ազգային եսապաշտության և սնապարծության քարոզը, ազգային ատելության և թշնամության հրահրումը: (Համանման հոսանք է և ջինգոյականությունը՝ հարձակողական, ռազմատենչ հայրենասիրությունը):

Ազգայնությունը տարբերվում է նաև «հայրենասիրությունից»:

Ազգայնությունը, որպես այդպիսին, միայն զգացմունք չէ և վերաբերում է տվյալ էթնոմշակութային արժեքների ու տվյալ հանրույթի կիսաքաղաքական (էթնոսի՝ ազգային պետության ստեղծման ճանապարհին) կամ քաղաքական մակարդակների (ազգային պետության լինելիության դեպքում) պահպանմանը:

Իսկ հայրենասիրությունը, որպես այդպիսին, հասարակական-հանրային զգացմունք է և վերացական հասկացություն, որի համատեքստում իրար են գուգորդվում սերն ու նվիրվածությունը հայրենիքի, հայրենի հողի ու ջրի նկատմամբ:

Պետք է նշել, որ հայրենասիրությունն ու ազգայնությունը միմյանց շատ օգտակար են, սակայն հայրենասիրությունը պետք է հատկապես այն ժամանակ, երբ բացակայում է ազգային պետությունը: Վերջինիս լինելիության պարագայում առավել անհրաժեշտ է ազգայնությունը՝ որպես տվյալ ազգի ստեղծած պետության էթնիկական հիմքերի պահպանմանն ու ազգային մշակույթի պաշտպանությանն ուղղված գործիք:

Այսպիսով, թերևս, ամփոփելով էթնիկական միավորների՝ ազգային պետություն ստեղծելու մեխանիզմների ու դրանց իրականացման ճանապարհին եղած խոչընդոտների ներկայացումը, հանգում ենք ներքոշարադրյալ եզրակացու-թյան:

Յուրաքանչյուր էթնիկական խումբ չէ, որ կարող է հավակնել ազգային պետության ստեղծմանը: Դրա համար այն պետք է ունենա՝

1. պատմահոգեբանական հիմքով սահմանված էթնիկական հիշողություն,


2. կոլեկտիվ այդ հիշողության համակարգում «հայրենիք»-բնատարածք,

3. ինքնանույնականացման ու ինքնագիտակցության բարձր մակարդակ, որը կարգացնի նրա՝ ազգային պետություն ստեղծելու ձգտումն ու կոլեկտիվ կամքը:

Ներկայիս գլոբալացման պայմաններում շատ տեսաբաններ հարցականի տակ են դնում կամ մերժում են ազգայնության և ազգային պետության սկզբունքները՝ համարելով, որ դրանք կորցնում են իրենց ուժը՝ ներգրավվելով կամ վերածնակերպվելով ավելի «մեծ» համակարգերում¹²:

Մենք, սակայն, գտնում ենք, որ վերոնշյալ հատկանիշներով կազմակերպված էթնիկական հանրույթն անպայման կստեղծի կամ կվերստեղծի սեփական ազգային պետությունը: Տեղին է հիշել Թեոդոր Հերցլի մարգարեությունը՝ «...հրեաներն ուզում են ունենալ պետություն և կունենան»¹³:

Չնայած քաղաքական, տնտեսական բազմաթիվ շահե-



Յուրզին Հաչերմաս

րով սահմանված խոչընդոտներին, ազգայնության գործընթացը մշտընթաց է:

գործընթացը բնական է, և մի օր կարող է վերջնականորեն դրսևորվել:

Հնարավոր են երկարատև կամ կարճատև անկումներ, բայց

10. Գևորգյան Հ. Ա., նույն տեղը, էջ 41:

11. Hobsbawn E.G. Nations and Nationalism since 1780, Cambridge Univ. press, 1993, p. 134.

12. Jurgen Habermas (Citizenship and National Identities; Some Reflection on the Future of Europe, Praxis International 12:1, April 1992); Jeremy Brecher (The National Question Reconsidered from an Ecological Perspective, New Politics: Summer 1987), Brzezinski, Zbigniew (‘‘The Implications of Change for U.S. Foreign Policy,’’ Department of State Bulletin 57 (July 3, 1967), Toffler, Alvin (The Third Wave. 1980, New York: Morrow), Herz, John H. (The Nation-State and the Crisis of World Politics, New York, McKay, 1976); Giddens A., A (Contemporary Critique of Historical Materialism, Macmillan: London, 1981), Charles W. Kegley, Jr., Eugene R. Wittkopf, (World Politics, Trend and Transformation, 1985, St. Martin’s Press, New York), Brown Laster R., (World Without Borders, New York: Random House, 1972), Пoppers Карл (Открытое общество и его враги, т. 2, М. 1992).

13. Theodor Herzl, the same place.



Պետություն կրթություն մասնավոր հատվածների եռանկյուն

«-ում բուհական համակարգի և սնտեսության միջև կառի կայացումը դեռ հեռու է ցանկալի մակարդակից: Ասվածի վառ աղացույցը ներկայումս սնտեսության համար անհրաժեշտ և աշխատանքային առկա կարգերի անհավասարությունն է, որի «մեղքի մեծագույն բաժինը» կրթությանն է ղականում: Յավոբ, այսօր կրթական համակարգը սնտեսությանն աղահոսվում է կարգերով, որոնք աս դեղբերում ղեկս չեն գալիս նրան , և դրան հակառակ՝ չի աղահոսվում կարգերով, որոնց կարիքը խիստ զգացվում է: Այս առումով հիմնական դերը ղականում է բուհական կրթությանը: Իհարկե, ամեն ինչ սկսվում է դղր-

ցից, և ղակաս կարևոր չէ նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության դերը: Ի դեղ, վերջին 2 օղակների «առաքելությունը» Հայաստանի սնտեսության մեջ բուհական կրթության համեմատ մեուտն է: Նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության հարցը հեսանկախացման սարիներին ամբողջությամբ անեստվեց, ինչը ղակառղարձավ այս կրթական օղակների քայքայմանը:

Յուրաքանչյուր երկիր ղարսավոր է իր առջև դնել ազգային մրցակցային առավելությունների գաղափար-հասկացությունը, այսինքն՝ թե ի՞նչ կարող ենք

արտադրել թեկուզ հարաբերականորեն ավելի լավ: Այս իմաստով թերևս արժե հարցի դասաստիսանը փնտրել կառավարության կողմից առաջ քաշված սնտեսական գերակայությունների ռազմավարական ծրագրում: Այդ ոլորտներից են՝ բարձր և սեղեկասվական սեխնուլոգիաները, հանգստությունաբերությունը, զբոսաբերությունը, ֆինանս և բարդ ինժեներիան: ՀՀ կառավարությունը հայտարարել է գիտելիքահեղին սնտեսության կառուցման նպատակի մասին, որովհետև վերը նշված ոլորտները ևս հենվում են կրթության համակարգին:

Ներկայումս դեպքեր են իրականացնում է զանազան գործառնություններ՝ սկսած կրթական ծրագրերի հաստատումից, վերջացած միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների սեղերի բաշխմամբ: Մակայն երկրի սնտեսությունը համադասաստիսան կադրերով ադաիովելու այս գործառնությունը ևս թերի է կատարում: Ասվածն ավելի դարգ է դառնում, եթե հաշվի ենք առնում մեր երկրում առկա գործադրության բարձր մակարդակը, որի զգալի մասը կարելի է դասել գործադրության **կառուցվածքային մոդելին**, այսինքն՝ առկա աշխատանքային ռեսուրսներն իրենց մասնագիտական որակներով չեն համադասաստիսանում սնտեսության որոշակի ճյուղի դահանջներին: Ասվածի վառ ադադույցն են ժամանակ առ ժամանակ հեռուստաթերով, ռադիոյով և մամուլով հայտարարությունները փականագործի, եռակցողի և ռաշերի համար ոչ գրավիչ այլ մասնագետների մեծ դահանջարկի վերաբերյալ, երբ հակառակ սրան, չգիտես ինչու, դեսական և մասնավոր բուիերը սարեկան «արտադրում են» հազարավոր իրավաբաններ, սնտեսագետներ, մենեջերներ, արևելագետներ, ֆադադագետներ և այլ «ելիսար» մասնագետներ՝ չմահողվելով աշխատանք կզանե՞ն նրանք, թե՞ ոչ:

Ըստ էության, երկրի սնտեսության համար կադրերի նկատմամբ դահանջը կարելի է բաժանել 2 հիմնական խմբի՝ դեսական և մասնավոր: Մի փոքր մաս էլ բաժին է ընկնում կրոնական և հասարակական կազմակերպություններին (այս ոլորտներում




գրադվածների սեսակարար կեիռն ընդհանուր գրադվածների թվի մեջ չի գերազանցում 0,05 %-ը):

Ինչդես ռուկայական սնտեսական համակարգ ունեցող յուրաքանչյուր երկրում, այնդես էլ Հայաստանում, կրթական համակարգի դասրասած կադրերի նկատմամբ հիմնական դահանջաշերը մասնավոր հասվածն է: Այս խմբին բաժին է ընկնում սնտեսության մեջ գրադվածների ընդհանուր թվի 80 %-ը, եթե հաշվի առնենք, որ գրադվածների ռուրջ 50 %-ը բաժին է ընկնում գյուղասնտեսությանը, ադա սսացվում է, որ զուտ մասնավոր հասվածի կադրերի նկատմամբ դահանջը սասանվում է 30 %-ի սահմաններում:

Ի սարբերություն դեսականի, մասնավոր հասվածի դահանջները կադրերի նկատմամբ ավելի ճկուն են արագ փոփոխվող սնտեսական գործունեության ոլորտների և սնտեսության ճյուղերի, նոր առաջացող մասնագիտությունների համաշեքսում: Հեսևար՝ մասնավոր հասվածի խնդիրներն ավելի բարդ են:

Մասնավորի և կրթության միջև կադր Հայաստանում չի ձևավորվել (չհաշված որոշակի բացա-



ռությունները): Այս կադի բացակայությունը, որ կարելի է լուծել մեծ ցանկության տարազայում, ավելի շատ երկկողմանի անհարբերության արդյունք է և ոչ անկարողության: Մեր երկրում մասնավորի և կրթության ոլորտի միջև ամենաարդյունավետ կադրը դրսևորվում է սեղեկասվական սեխնոլոգիաների ոլորտում, որտեղ այն ներկայացնող խոշոր ձեռնարկությունները ստեղծել են «Ինֆորմացիոն ձեռնարկությունների միություն»՝ առաջիկայում նախատեսելով ստեղծել համանման կոնսորցիում, որի հիմնական նպատակներն են լինելու.

- միասնական տասվիրատուի ձևավորումը,
- ոլորտը ներկայացնող ընկերությունների մասնագետներին ուսումնական գործընթացներին մասնակից դարձնելը,
- բուհերում սեփական ծրագրեր սկսելը:

2007/2008 թթ. ուսումնական տարում հանրա-
 մեծությունում գործել է 85 բուհ՝ 23 մեծական և 62 ոչ

մեծական: Նույն տարում բուհ է ընդունվել 26157 մարդ, իսկ ուսանողների ընդհանուր թիվը բուհերում կազմել է 112224 մարդ: Ուսանողների 77 %-ը սովորում են մեծական բուհերում:

2007/2008 թթ. Հայաստանի բուհերում վճարված սովորող ուսանողները, որոնք ուսման վարձ, վճարել են մոտ 21,5 մլրդ. դրամ: Ընդ որում, մեծական բուհերում վարձավճարի ընդհանուր գումարը կազմում է մոտ 16,6 մլրդ. դրամ: Պեճական բուհերի ուսանողների գերակշիռ մասի՝ 69 %-ի ուսման վարձը չի գերազանցում տարեկան 300 հազար դրամը: Ընդամենը 4 %-ն է վճարում 600 հազար դրամից ավելի: 2007/2008 թթ. վճարվել է մոտ 1 մլրդ. դրամ կրթաթուրք (չհաշված անվանականները):

2008 թ. ՀՀ մեծական բյուջեով բարձրագույն կրթությանն է տրամադրվել շուրջ 6,7 մլրդ. դրամ կամ մեծբյուջեի ծախսային մասի 0,7 %-ը:

**Պեճական և մասնավոր բուհերում ուսանողների
 սեղաբաշխումը՝ ըստ վարձավճարների չափերի**

ՊԵՅԱԿԱՆ	
Վարձավճար (հազ. դրամ)	Ուսանողների թվաքանակ
մինչև 100	4918
101-200	21701
201-300	18236
301-400	12490
401-500	4526
501-600	611
601 և ավելի	2748
Ընդամենը	65330

ՄԱՍՆԱՎՈՐ	
Վարձավճար (հազ. դրամ)	Ուսանողների թվաքանակ
մինչև 100	8752
101-200	7881
201-300	7263
301-400	1245
401 և ավելի	353
Ընդամենը	25494

**ՀՀ-ում ղեկավարող բուհական համակարգի
ամենաթանկ մասնագիտությունները (դրամ)**

Բուհը, մասնագիտությունը	Վարձ
1 ԵՊԲՀ, Բուժական գործ	800000
2 ԵՊԲՀ, Սոմասոլոգիա	800000
3 ԵՊՀ, Իրավագիտություն	700000
4 ԵՊԲՀ, Դեղագործություն	580000
5 ՀՊՄՀ, Իրավագիտություն	520000
6 ԵՊՀ, Միջ. հարաբերություն	500000
7 ԵԿԱՊԿ (Կոնսերվատիվ)	500000
8 Գավառի ՊՀ, Իրավագիտություն	490000
9 ԵՃՇՊՀ, Ճարտարապետություն	490000

2005 թ, Հայաստանը անդամակցեց Բուլղարիայի գործընթացին, որի արդյունքում ընդունվեց կրթական եռաստիճան համակարգը. եթե նախկինում 5 տարի սովորելով ուսանողը ստանում էր միանգամից մագիստրոսի որակավորում, ադա այսօր դասանցվում է արդեն 6 տարի: Այսինքն, և/ ժամանակային, և/ ֆինանսական փաստացի ծախսերը աճել են:

Ուսանողը, ընդունվելով բուհ, 4-6 տարվա ընթացքում ծախսում է 1-1,5 մլն. դրամ և կարող է բուհն ավարտել առանց անհրաժեշտ գիտելիքների:

Եթե ցանկանում ենք համեմատել մեր բուհերի որակը, ադա առաջին հերթին ղեկավարողներին անցկացնում ենք սկսելով վարկանիշների անցկացման ազգային համակարգերի ձևավորումից, որոնք սկզբնական օրերում չեն կարող անմիջապես ընդգրկել միջազգային ցուցանիշներ: Ուրեմն ղեկավարողները սկսել ազգային նվազագույն ցուցանիշներից, որոնք կարող են բնութագրել կրթության որակը, օրինակավարների աշխատանքի տեղավորման հավանականությունը և այլն:

Ամեն տարի միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպություններ հրատարակում են աշխարհի վարկանիշները և օտերի համար հենց այդ վարկանիշներն են դարձել որդես կողմնորոշիչ՝ բուհի ընտրության համար: Հետխորհրդային տարածքի բուհերից միայն Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան ղեկավարող համալսարանն է, որ ընդգրկված է աշխարհի 100 լավագույն բուհերի ցանկում՝ զբաղեցնելով 93-րդ հորիզոնականը: Եթե կարող են Հայաստանի բուհերն ակնկալել հայտնվելու վարկանիշային այս ցարքում, դժվար է ասել:

Հայաստանի հետանկախացման տարիներին սկսած և 90-ականների վերջին իր «վերելի գազաթնակետին» հասած մասնավոր բուհական համակարգը 2000 թ. որոշակի անկում արձանագրեց (թվաքանակի իմաստով): 1997/1998 թթ. ուս. տարում գործող 87 մասնավոր բուհերի թիվը 2007/2008 թթ. ուս. տարում արդեն 62 է: Թվաքանակի կրճատումը կապված էր մի քանի հանգամանքների հետ, որոնց թվում կարելի է նշել՝



- բուհերի հավասարման գործընթացի խստացումը,
- Պետական բուհերում սովորող ղեկավարների զինծառայության սարկեսման իրավունքի սրամադրման հանգամանք, որը ըստ էության անհավասար մրցակցային դրամաներ է ստեղծում Պետական և ոչ Պետական հավասարված բուհերի միջև, ինչը չի բխում ոչ ռուկայական սնտեսության և սեփականության ձևերի բազմազանությունից, ոչ էլ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի ոգուց,
- բավարար ֆանակի դիմորդներ չունենալը և այլն:

Ինչպես ժողովուրդն է ասում՝ «կարկուտը խփած սեղն է ծեծում», և կրթական համակարգի բազմաթիվ խնդիրների շարքը համարելու է գալիս մի շատ կարևոր մարտահրավեր, որը եթե իրեն դեռ զգացնել չի սկսել, ապա զգացնել կսա առաջիկա տարիների ընթացքում: Այս տարի բուհ են դիմելու հիմնականում 17-18 տարեկան ՀՀ ֆաղափացիները, այսինքն՝ նրանք, ովքեր ծնվել են 1991-92 թթ.: Այս և սրանց հաջորդող տարիներն այն տարիներն են, երբ մեր հանրապետություն-

նում ծնելիության մակարդակը գրեթե կրկնակի անկում աղբյուր: Դա նշանակում է, որ դիմորդների թվաֆանակի առումով գոյություն ունեցող այն ինտերգիան, որ դահողանվել է մինչև հիմա, նույնքան կսրուկ փոփոխվելու է՝ իր հետ բերելով բազում խնդիրներ: Մասնավորապես, ոչ միայն բուհական, այլև ամբողջ կրթական համակարգը կանգնելու է սեղերի վերաբաշխման խնդրի առջև՝ իհարկե կրճատման ուղղությամբ: Պետական բուհական համակարգում հասկապետ՝ այս երևույթն իր բացասական ազդեցությունն ունենալու է: Հակառակ դարազայում, եթե դահողանվելն եղած սեղերը բուհերում, մենք կունենանք արդեն նոր՝ ավելի ցածր որակի դիմորդներ, հետևաբար՝ նաև ուսանողներ: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն է դառնալու նաև բուհերում ըստ մասնագիտությունների՝ սեղերի վերաբաշխման ռազմավարությունը վերանայելը: Բերված փաստին հակառակ՝ «էլիտար» Պետական բուհերը ավելացնում են առանց այն էլ շատ մասնագիտությունների ֆանակները (չփակելով հնացած, չդահողանված մասնագիտությունները)՝ ֆինանսական միջոցների հոսքերի ակնկալիքով:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից ֆայլեր են ձեռնարկվում սնտեսության համար անհրաժեշտ կադրերի դաստասման և մասնագիտական կողմնորոշման հարցերում, որը ներկա փուլում բնավ բավարար մակարդակի չի հասնում: Ստույն բերված են այդ ֆայլերը.

- Մկսած 2005 թ. միջին մասնագիտական ոլորտը կրկին Պետության ուժադրության կենտրոնում է: Հասկապետ մեծ է դահողանվելը սղասարկման ոլորտի աշխատողների նկատմամբ: Այդ իսկ դասձառով իրականացվում են ոլորտի բարեփոխումների մի շարք ծրագրեր, որոնցից հասկապետ կարևորվում է մեծահասակների կրթության մասին օրենքը: Այսինքն՝ 30 տարի առաջ մասնագիտությունը սացած մարդը ռուկայի ներկա դահողանվելին համադաստասնելու համար կարող է վերադաստասնվել կարճաժամկետ դասընթացների միջոցով, որոնք սնում են 1 ամսից մինչև մեկ տարի:



- 2007 թ. սահմանվեց *ֆուլթայմ քուի անցման կարգը, ըստ որի հնարավորություն է սրվում ֆուլթայմ լավագույն օրջանավարձներին ուսումը շարունակել համադասախան բուհի երկրորդ կուրսում:*


- Այս տարի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ բացվեց **«Մասնագիտական կողմնորոշման կենտրոն»**, որը ցանկացողներին կհամարի ժողովրդական կենտրոնում հասանելի մասնագիտությունների մասին, ինչպես նաև այն հաստատությունների մասին, որոնք կարող են դասընթացի այդ մասնագիտության համադասախան կարգեր և այլն:

Այնուամենայնիվ, ներկայումս դասընթացի ուսուցիչների կենտրոնում է կրթությունը և ընդհանրապես կրթական համակարգը: Որպես ամփոփում՝ 2009

թ. բյուջեով կրթությանը նախատեսված է ֆինանսավորման մոտ 20%-ի աճ: Սակայն դասընթացի ուսուցիչներին դարձնել այն փաստի վրա, որ գիտելիքների ակնհայտ ցածր մակարդակով, բայց դիմումներով մասնագետը հետագայում զբաղեցնում է դասական դասերում՝ իրավական, տնտեսական, սոցիալական ոլորտներում՝ չարիք դառնալով հասարակության գլխին:

ՍՈՒՐԵՆ ՊԱՐՄՅԱՆ

ՀՊՏՀ-ի ուսանող



ԻՆՉՈՒ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Ալբերտ Էյնշտեյն
«Monthly Review», 1949, մայիս

Արժե՞ արդյոք, որ տնտեսական և սոցիալական հարցերի ոչ մասնագետ մեկը կարծիք հայտնի սոցիալիզմի մասին: Որոշ պատճառներով վստահ եմ, որ արժե:

Նախ եկեք հարցը դիտենք գիտական իմացության տեսանկյունից: Կարող է թվալ, թե աստղագիտության և տնտեսագիտության միջև ոչ մի էական մեթոդաբանական տարբերություն չկա. երկու ոլորտների գիտնականներն էլ փորձում են հայտնաբերել բոլորի համար ընդունելի օրենքներ՝ երևույթների սահմանա-

գծված մի խմբի համար, որպեսզի նրանց փոխկապակցվածությունը հնարավորինս պարզ ու հասկանալի լինի: Բայց իրականում այդպիսի մեթոդաբանական տարբերություններ գոյություն ունեն: Ընդհանուր օրենքների հայտնաբերումը տնտեսագիտության ոլորտում դժվարացել է այն հանգամանքով, որ դիտարկված տնտեսական երևույթները հաճախ կրում են տարբեր գործոնների ազդեցություն, և շատ դժվար է դրանք առանձին գնահատել: Բացի այդ, մարդկային պատմության, այսպես կոչված, քաղաքակիրթ շրջանի սկզբից ևեթ կուտակված փորձը, ինչպես հայտնի է, մեծապես ազդվել և սահմանափակվել է իրենց բնույթով բացառապես ոչ տնտեսական պատճառներով: Օրինակ, պատմությանը հայտնի շատ մեծ պետություններ իրենց գոյությամբ պարտական են նվաճումներին: Նվաճող ժողովուրդները, իրավակաճանդներ և տնտեսապես, դառնում էին նվաճված երկրի արտոնյալ դաս: Նրանք իրենց էին վերապահում հողի սեփականության մենաշնորհը և իրենց շարքերից ընտրում քրմապետներին: Քրմերը, վերահսկելով կրթական սիստեմը, հասարակության դասակարգային բաժանումը դարձրեցին մշտական և ստեղծեցին արժեքների մի այնպիսի համակարգ, որով սկսեց առաջնորդվել ժողովուրդը իր հասարակական կյանքում՝ մեծամասամբ անգիտակցաբար: Բայց պատմական սովորույթը, այսպես ասենք, հետևում է մեզ. դեռ ոչ մի տեղ մենք չենք հաղթահարել մարդկային զարգացման, ինչպես Թորսթեյն Վեբլենն է ասում, «գիշատիչ փուլը»: Դիտարկվող տնտեսական փաստերը այդ փուլին են պատկանում, և նույնիսկ դրանցից ծնունդ առած օրենքները կիրառելի չեն այլ փուլերում: Եվ քանի որ սոցիալիզմի իրական նպատակը հենց այդ գիշատիչ փուլը հաղթահարելն ու առաջ գնալն է, տնտեսագիտությունը իր ներկա վիճակով չի կարող ուրվագծել ապագայի սոցիալիստական հասարակությունը: Երկրորդ, սոցիալիզմը ուղղված է սոցիալ-էթիկական նպատակի: Մինչդեռ գիտությունը նպատակներ չի ստեղծում, ոչ էլ դաստիարակում է դրանք մարդկանց մեջ: Լավագույն դեպքում գիտությունը կարող է միջոցներ առաջարկել որոշակի նպատակների հասնելու համար: Բայց այդ նպատակներն էլ հենց հղանում են բարո-

յական բարձր գաղափարներով օժտված մարդիկ, և եթե այդ գաղափարները մեռելածին չեն և կենսունակ են, դրանք ընդունվում և իրականացվում են մարդկանց այն խմբերի կողմից, ովքեր կհասգիտակցաբար վճռում են հասարակության դանդաղ էվոլյուցիան:

Ահա թե ինչու մենք պետք է զգույշ լինենք՝ չգերազնահատելու գիտության և գիտական մեթոդների նշանակությունը, երբ հարցը վերաբերում է մարդկային խնդիրներին. և պետք չէ ենթադրել, թե միայն փորձագետները իրավունք ունեն դատելու հասարակության կազմակերպմանն առնչվող խնդիրների մասին: Վերջին ժամանակներս անընդհատ խոսվում է այն մասին, թե մարդկային հասարակությունը ճգնաժամ է ապրում, որ լրջորեն խախտվել է նրա կայունությունը: Այսպիսի իրավիճակի համար խիստ բնորոշ է, որ անհատները անտարբերության կամ նույնիսկ թշնամանքի զգացում ունենան որևէ խմբի հանդեպ (մեծ կամ փոքր), որին իրենք պատկանում են: Միտքս պարզելու համար բերեմ մի օրինակ իմ սեփական փորձից. վերջերս մի շատ խելամիտ և բարեհաճ մարդու հետ ես քննարկում էի նոր պատերազմի սպառնալիքը, որն իմ կարծիքով լրջորեն կվտանգի մարդկության գոյությունը: Ես նկատել տվեցի, որ միայն գերազգային ինչ-ինչ կազմակերպություն կարողանար պաշտպան կանգնել այդպիսի վտանգից: Գրանից անմիջապես հետո իմ գրուցակիցը հանգիստ ու սառնորեն ասաց. «Ինչո՞ւ եք դուք այդքան խիստ դեմ մարդկային ցեղի անհետացմանը»:

Ես համոզված եմ, որ մեկ դարից էլ պակաս ժամանակ առաջ ոչ ոք այսպես թեթևորեն նման կարգի հայտարարություն չէր անի: Դա հայտարարություն էր մի մարդու, ով անհույս փորձեր էր արել ներքին ինչ-որ հավասարակշռություն գտնելու և չէր հաջողել: Դա ցավագին միայնության և մեկուսացման արտահայտություն էր, որից շատերն են տառապում մեր օրերում: Ի՞նչն է պատճառը: Ելք կա՞:

Հեշտ է նման հարցեր բարձրացնելը, բայց դժվար է համոզիչ պատասխան գտնելը: Համենայն դեպս, ես կփորձեմ, որքան կարող եմ, թեպետ գիտակցում եմ, որ մեր զգացմունքներն ու ձգտումները հաճախ

հակասական են ու անըմբռնելի և որ նրանք չեն կարող արտահայտվել հեշտ ու պարզ ձևակերպումներով:

Մարդը միայնակ, և միևնույն ժամանակ, հասարակական (social) էակ է: Որպես միայնակ էակ նա ջանում է պահպանել իր և իր մտերիմների գոյությունը, բավարարել իր անձնական ցանկությունները և զարգացնել իր բնածին կարողությունները: Որպես հասարակական էակ նա փորձում է ճանաչում և համակրանք գտնել այլ մարդկանց կողմից, կիսել նրանց ուրախությունները, մխիթարել նրանց վշտի պահին և բարելավել նրանց կյանքի պայմանները: Հենց այս տարաբնույթ, հաճախ հակասական ձգտումների գոյությունն էլ պայմանավորում է մարդու յուրահատուկ բնույթը, և դրանց ուրույն համակցությունը (combination) որոշում է ինչպես ներքին հավասարակշռության աստիճանը, որին ընդունակ է հասնելու անհատը, այնպես էլ հասարակության բարեկեցության մեջ կատարած նրա ներդրումը:

Շատ հնարավոր է, որ այս երկու մղումների հարաբերական ուժը, հիմնականում, ժառանգականության մեջ է: Բայց անհատականության վերջնական կայացումը մեծապես ձևավորվում է այն միջավայրում, որտեղ մարդը գտնում է իրեն իր զարգացման ընթացքում, հասարակության կառուցվածքի մեջ, որտեղ նա աճում է, նույն այդ հասարակության սովորույթների և վարվեցողությանը տված գնահատականի մեջ: Առանձին անհատի համար «հասարակություն» վերացական հասկացությունը նշանակում է իր ժամանակակիցների և նախորդ սերունդների բոլոր մարդկանց հետ իր ունեցած ուղղակի և անուղղակի հարաբերությունների հանրագումարը: Անհատը կարող է մտածել, զգալ, ձգտել և աշխատել ինքնուրույն: Բայց նա այնքան է կախված հասարակությունից իր ֆիզիկական, մտավոր և զգացական գոյությամբ, որ անհնար է մտածել նրա մասին կամ հասկանալ նրան հասարակության շրջանակից դուրս: Հենց «հասարակությունն» է ապահովում մարդուն սննդով, հագուստով, աշխատանքային գործիքներով, լեզվով, մտածելու կարողությամբ և արտահայտվելու ձևերով: Նրա կյանքը հնարավոր է դարձնել ներկայի և անցյալի այն միլիոնավոր մարդկանց աշխատան-

քի և ձեռքբերումների շնորհիվ, որոնք բոլորը թաքնված են այդ մի հատիկ բառի՝ «սոցիալիզմի» տակ: Ակնհայտ է, սակայն, որ անհատի կախվածությունը հասարակությունից բնական երևույթ է, ինչը հնարավոր չէ վերացնել, ճիշտ այնպես, ինչպես մրջյունների և մեղուների դեպքում: Բայց և այնպես, մինչդեռ մրջյունների և մեղուների ողջ կյանքի ընթացքը, ամենայն մանրամասնությամբ, ղեկավարվում է կոշտ ժառանգական բնազդներով, մարդ արարածների սոցիալական վարվելակերպն ու փոխհարաբերությունները խիստ տատանվում են և ենթակա են փոփոխությունների: Հիշողությունը, կոմբինացիաներ կատարելու ընդունակությունը, բանավոր հաղորդակցության շնորհը մարդկային էակների համար հնարավոր են դարձրել կենսաբանական անհրաժեշտությամբ թելադրված կենսագործունեության տարբեր ձևեր: Դրանք դրսևորվում են սովորույթների, հիմնարկների, կազմակերպությունների մեջ, գրականության, գիտական և ճարտարագիտական հաստատություններում, արվեստի գործերում: Սրանով է բացատրվում այն, թե ինչպես է մարդը կարողանում իր վարվելաձևով որոշակիորեն ազդել իր կյանքի վրա և թե այդ պրոցեսում ինչ դերակատարություն է ունենում գիտակցությունը և ցանկությունը:

Ծնվելիս մարդը ժառանգում է կենսաբանական հաստատուն և անփոփոխ կազմվածք՝ ներառյալ մարդ արարածին բնորոշ բնական պահանջները: Ի հավելումն դրա, կյանքի ընթացքում նա ձեռք է բերում նաև որոշակի կուլտուրական կերտվածք, ինչը նա որդեգրում է հասարակությունից հաղորդակցության և այլ տիպի ազդեցությունների միջոցով: Հենց այս կուլտուրական կերտվածքն է, որ ժամանակի ընթացքում ենթարկվում է փոփոխության և որն էլ մեծ հաշվով որոշում է անհատի և հասարակության միջև փոխհարաբերությունը: Ժամանակակից անտրոպոլոգիան, այսպես կոչված պրիմիտիվ կուլտուրաների համեմատական ուսումնասիրության միջոցով, սովորեցրել է մեզ, որ մարդկային էակների սոցիալական վարքուբարքը կարող է մեծապես տարբեր լինել՝ կախված հասարակության մեջ գերիշխող կուլտուրական մոդելից և կազմակերպ-

չական ձևերից: Հենց սրա վրա է հիմնված մարդկության վիճակի բարելավմանը միտված ճգնաժամների իրականացման հույսը: Մարդ արարածները, իրենց կենսաբանական կերտվածքով, դատապարտված չեն միմյանց ոչնչացնելու կամ լինելու իրենց դաժան ճակատագրի զոհը: Եթե հարցնենք ինքներս մեզ, թե ինչպես պետք է հասարակության կառուցվածքը և մարդու կուլտուրական վերաբերմունքը փոխվի, որպեսզի մարդկային կյանքը լինի հնարավորինս գոհացուցիչ, մենք պետք է մշտապես գիտակցենք այն փաստը, որ կան որոշակի պայմաններ, որոնք մենք ի վիճակի չենք ձևափոխել: Ինչպես արդեն ասվեց, մարդու կենսաբանական բնույթը, ինչ գործնական նպատակով էլ լինի, ենթակա չէ փոփոխության: Բացի այդ, վերջին մի քանի դարերի տեխնոլոգիական և դեմոգրաֆիական զարգացումները պայմաններ են ստեղծել, որոնք դեռ երկար են մնալու մեզ հետ: Բնակչության հարաբերականորեն բարձր խտության պատճառով, որի շարունակական գոյությունը պայմանավորված է ապրանքների արտադրությամբ, բացարձակապես անհրաժեշտ են աշխատանքի խիստ բաժանում բարձր արտադրողականությամբ ապարատուրա: Հավիտյանս անցել են այն հովվերգական ժամանակները, երբ անհատները կամ հարաբերականորեն փոքր խմբերը կարող էին լիովին ինքնաբավ լինել: Շատ չափազանցած չենք լինի, եթե ասենք, որ մարդկությունն արդեն իսկ արտադրության և սպառման համամոլորակային մի ընդհանուր համայնք է դարձել:

Հիմա ես հասա այն կետին, ուր պետք է համառոտ շարադրեմ իմ կարծիքը ժամանակակից ճգնաժամի էության մասին: Այն վերաբերում է անհատի և հասարակության հարաբերությանը: Անհատը, ավելի քան երբևէ, գիտակցում է իր կախվածությունը հասարակությունից: Բայց այդ, կախվածությունը նա չի դիտում որպես արժանիք, որպես օրգանական կապ, որպես պաշտպանական ուժ, այլ ավելի շուտ՝ որպես իր բնական իրավունքների, նույնիսկ տնտեսական գոյության, սպառնալիք: Ավելին, նրա դիրքը հասարակության մեջ այնպիսին է, որ մշտապես շեշտվում են նրա եսասիրա-

կան մղումները, մինչդեռ նրա սոցիալական մղումները, որոնք բնականորեն ավելի թույլ են, արագորեն վատթարանում են: Ամեն մի մարդկային էակ, ինչպիսին էլ լինի նրա դերը հասարակության մեջ, տառապում է վատթարացման այս գործընթացից: Անգիտակցաբար իրենց սեփական եսասիրության կալանավորները դարձած, նրանք իրենց զգում են անապահով, միայնակ և զրկված կյանքի պարզունակ, թեթև, անխարդախ հաճույքներից: Մարդը կարող է գտնել կյանքի իմաստը, թեկուզ կարճ ու վտանգավոր, միայն նվիրելով իրեն հասարակությանը:

Այսօր գոյություն ունեցող կապիտալիստական հասարակության տնտեսական անիշխանությունը, իմ կարծիքով չարիքի իսկական աղբյուր է: Մենք տեսնում ենք մեր առջև արտադրողների մի հսկայական հանրություն, որի անդամները անընդհատ ձգտում են զրկել միմյանց իրենց կոլեկտիվ աշխատանքի պտուղներից՝ ոչ թե ուժով, այլ մեծամասամբ օրենքով հաստատված կանոններով: Այս պարագայում, կարևոր է հասկանալ, որ արտադրության միջոցները, այսպես ասած՝ ողջ արտադրողական կարողությունը, որն անհրաժեշտ է ինչպես սպառողական, այնպես էլ լրացուցիչ հիմնական ապրանքների արտադրության համար, կարող են օրինականորեն լինել, և այդպես էլ կա, անհատների մասնավոր սեփականությունը:

Հետագա քննարկման ընթացքում, պարզություն մտցնելու համար, ես «բանվորներ» կկոչեմ բոլոր նրանց, ովքեր չեն հանդիսանում արտադրության միջոցների սեփականատեր, չնայած դա այնքան էլ չի համապատասխանում տերմինի ավանդական իմաստին: Արտադրության միջոցների սեփականատերը հնարավորություն ունի գնելու բանվորի աշխատուժը: Օգտագործելով արտադրության միջոցները, բանվորը արտադրում է նոր ապրանքներ, որոնք դառնում են կապիտալիստի սեփականությունը: Այս գործընթացում ամենաէականը բանվորի արտադրածի և նրա վարձավճարի միջև եղած հարաբերությունն է՝ երկուսն էլ գնահատելով իրական արժեքի չափով: Դատելով աշխատանքային պայմանագրի «ազատ» լի-

նելու հանգամանքից, այն, ինչ ստանում է բանվորը, որոշվում է ոչ թե նրա արտադրած ապրանքի իրական արժեքով, այլ նրա նվազագույն կարիքներով, և կապիտալիստների աշխատուժի պահանջարկի ու աշխատատեղի համար մրցող բանվորների թվի հարաբերությամբ: Կարևոր է հասկանալ, որ նույնիսկ տեսականորեն բանվորի աշխատավարձը պայմանավորված չէ նրա արտադրանքի արժեքով: Մասնավոր կապիտալը հակված է կենտրոնանալու մի քանի ձեռքերում, մասամբ կապիտալիստների միջև եղած մրցակցության, մասամբ էլ այն պատճառով, որ տեխնոլոգիական զարգացումը և աշխատանքի աճող բաժանումը նպաստում են արտադրության ավելի մեծ միությունների ստեղծմանը՝ ավելի փոքրերի հաշվին: Այսպիսի զարգացումների արդյունքում ձևավորված մասնավոր կապիտալի օլիգարխիան ձեռք է բերում հսկայական իշխանություն, ինչը չի կարող արդյունավետ կերպով վերահսկել նույնիսկ ժողովրդավարորեն կազմակերպված քաղաքացիական հասարակությունը: Այդպես է լինում, որովհետև օրենսդիր մարմինների անդամները ընտրվում են քաղաքական կուսակցությունների կողմից, որոնց լայնորեն ֆինանսավորում կամ, այլ կերպ ասած, ճնշման են ենթարկում մասնավոր կապիտալիստները, ովքեր և, գործնական նկատառումներով, անջատում են ընտրազանգվածը օրենսդրական մարմնից: Դրա հետևանքով ժողովրդի ներկայացուցիչները, փաստորեն, չեն կարողանում բավարար չափով պաշտպանել բնակչության ոչ արտոնյալ հատվածների շահերը: Ավելին, գոյություն ունեցող պայմաններում մասնավոր կապիտալիստները անխուսափելիորեն, ուղղակի կամ անուղղակի կերպով, վերահսկում են ինֆորմացիայի գլխավոր աղբյուրները (մամուլը, ռադիոն, կրթությունը): Այսպիսով, չափազանց դժվարանում է, շատ դեպքերում՝ նաև անհնարին դառնում, անհատ քաղաքացու համար՝ օբյեկտիվ եզրահանգումների գալ և խելամիտ օգտագործել իր քաղաքական իրավունքները:

Կապիտալի մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսության մեջ գերիշխող իրավիճա-

կը բնութագրվում է երկու հիմնական սկզբունքներով. նախ, արտադրության (կապիտալի) միջոցները հանդիսանում են մասնավոր սեփականություն, իսկ սեփականատերերն էլ տնօրինում են դրանք, ինչպես հարմար են գտնում, և երկրորդ՝ աշխատանքային պայմանագիրը ազատ է: Անշուշտ, մաքուր կապիտալիստական հասարակություն, որպես այդպիսին, գոյություն չունի: Մասնավորապես, պետք է նկատի ունենալ, որ երկարատև և դաժան քաղաքական պայքարի միջոցով բանվորներին հաջողվել է ձեռք բերել ինչ-որ չափով բարելավված «ազատ աշխատանքային պայմանագրի» ձև բանվորների որոշակի կատեգորիայի համար: Բայց, ամբողջությամբ վերցրած, ժամանակակից տնտեսությունը չի տարբերվում «մաքուր» կապիտալիզմից: Արտադրությունը իրականացվում է օգուտի համար, այլ ոչ թե օգտագործման: Ոչ մի երաշխիք չկա, որ աշխատելու ունակ և կամեցող բոլոր մարդիկ աշխատանք գտնելու հնարավորություն կունենան. «գործազուրկների բանակ» համարյա միշտ էլ եղել է: Բանվորը մշտապես աշխատանքը կորցնելու վախի մեջ է: Քանի դեռ գործազուրկ և ցածր վարձատրվող բանվորները չեն ապահովում շահութաբեր շուկա, սպառողական ապրանքների արտադրանքը կլինի սահմանափակ և մեծ զրկանքների պատճառ կդառնա: Տեխնոլոգիական առաջընթացի արդյունքում ավելի հաճախ մեծանում է գործազրկությունը, քան թեթևանում է մարդկանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը: Շահույթի մոլուցքը՝ զուգորդված առանձին կապիտալիստների միջև եղած մրցակցությամբ, անկայունության պատճառ է հանդիսանում կապիտալի ստեղծման և իրացման համար, որը և ուղեկցվում է դաժանորեն աճող ճգնաժամներով: Անսահմանափակ մրցակցությունը ուղեկցվում է աշխատանքի հսկայական կորստով և անհատի սոցիալական գիտակցության այն խեղվածությամբ, որ ես նշեցի վերևում:

Անհատի այս խեղվածությունը ես համարում եմ կապիտալիզմի ամենամեծ չարիքը: Մեր ամբողջ կրթական համակարգը տառապում է այս չարիքից: Ուսանողի մեջ պատվաստվում է մի չափազանցված մրցակցային վերա-

բերմունք, և նա սկսում է երկրպագել շահադիտական հաջողությանը՝ որպես ապագա կարիերայի երաշխիք:

Ես համոզված եմ, որ կա միայն մեկ ճանապարհ այս ահավոր չարիքից ազատվելու համար, այն է՝ սոցիալիստական տնտեսության հաստատում, որն ուղեկցվում է դեպի սոցիալական նպատակները կողմնորոշված կրթական համակարգով: Այսպիսի տնտեսության մեջ արտադրության միջոցները կազմում են հասարակության սեփականությունը և օգտագործվում են պլանային ձևով: Պլանային տնտեսությունը, որը կարգավորում է արտադրությունը հասարակության կարիքներին համապատասխան, կատարվելիք աշխատանքը կբաժանի աշխատունակ բոլոր անդամների միջև և կերաշխավորի յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի ապրելու իրավունքը: Անհատի կրթությունը, նրա բնատուր կարողությունների զարգացմանը զուգընթաց, կզարգացնի նրա մեջ պատասխանատվության զգացում ուրիշների հանդեպ՝ մեր այսօրվա հասարակության մեջ տիրող ուժի և հաջողակության փառաբանման փոխարեն:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հիշել, որ պլանային տնտեսությունը դեռևս սոցիալիզմ չէ: Պլանային տնտեսությունն իր հերթին կարող է ուղեկցվել անհատի լիովին ազատագրմամբ: Սոցիալիզմի կառուցումը պահանջում է մի շարք խիստ դժվարին սոցիալ-քաղաքական խնդիրների լուծում. հեռահար քաղաքական և տնտեսական կենտրոնացման պայմաններում ինչպե՞ս անել, որ բյուրոկրատիան չդառնա ամենակարող և ամբարտավան: Ինչպե՞ս է հնարավոր պաշտպանել անհատի իրավունքները և դրա հետ մեկտեղ ապահովել բյուրոկրատիայի իշխանության ժողովրդավարական հակակշիռը:

Սոցիալիզմի նպատակների և խնդիրների վերաբերյալ հստակությունը հսկայական նշանակություն ունի մեր անցումային ժամանակաշրջանում: Քանի որ մեր օրերում այս խնդիրների ազատ, անկաշկանդ քննարկումը հզոր տարրի տակ է դրված, այս հանդեսի լույս ընծայումը ես կարևոր հասարակական գործ եմ համարում:



ՍՊԱՐԱՊԵՏ ԳԱՐԵԳԻՆ ՆՇՂԵՅԻՆ

ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԳԻՆ
100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

(ԿՈՐՈՒՍՏԷ ՓՐԿԵԼՈՒ ՄԻՏՈՒՄՈՎ)

ԱԻՕ ԳԱԹՐՃԵԱՆ
Հալեպ, Սուրիա

Հայ ժողովուրդին ծառայութեան համար նախասահմանուած ծնունդ մըն էր Հայ Յեղափոխական Դաճնակցութեան անդամ, ռազմական, քաղաքական եւ յետական գործիչ, հրադարակախօս, փիլիսոփայ Սպարապետ Գարեգին Նշղեի (Գարեգին Տէր Յարութիւնեան, ծնած է 1886-ին Նախիջեանի Կզնու գիւղը - մահացած Վլադիմիր քաղաքի բանօր 1955-ին), ամբողջական իրաւ սիրս մը՝ երբ գրիչը ձեռք կ'առնէր, խոռովիչ՝ երբ բեմ կը բարձրանար, ողջմիս՝ երբ վասն հայրենեաց առաքելութեան մը գլուխը կ'անցնէր: Խօսքը կեանքի մէջ գործնականացնելու ճիգն ու աշխատանքն էին, որ զինք դարձուցին յաճամունքի արժանի կուտ մը՝ ամէնուրեք:

ՆՇՂԵՅ՝ ծածկանունին մկրտութիւնը դիտուկ էր անոր կեանքի գործունէութեան, որով մկրտուած էր, որով հետեւ ՆՇՂԵՅ՝ բառը հայերէնի մէջ կը նշանակէ յանդուիս, օտարական, այլ հոմանիւծով՝ վարանդի: Այդպէս ալ աղագուցուցաւ Գ. Նշղեի կեանքի ամբողջ ժամանակահատուածի ընթացքին՝ մինչեւ իր մահը:

Այս յօդուածը վերնագիրէն իսկ յայտնի կ'ըլլայ ընթերցողին, որ չի միտք ներկայացնել Գարեգին Նշղեի կենսագրականը, անոր գործերու վերլուծութիւնը, ոչ ալ անոր, որպէս ընթացութեան հետեւանք, Հայ Յեղափոխական Դաճնակցութեան շարքերէն երկու անգամ հեռացումը: Անոր կեանքն ու գործունէութիւնը երբ կը հեռագօտիմք ամբողջութեամբ, յայտնա-

Վերջին հաշվարկներով, թե՛ այս
 աշխարհի մեջ առաջին անգամ էլ
 մարդիկ հայտնաբերեցին մեզ
 այնքան մոտեցրեցին համարձակ
 հարաբերությունները:

1926. 30. 11
 Հայրենիք

բերեցին Դաճնակցական գործունեության ընթաց-
 քին՝ ձերբակալության ու այդ դասճանով իսկ անոր
 նուիրուած երգի դրդադասճանները:

Արդարեւ, Նժդեհի Սոֆիայի դասնորոշի սղա-
 ներու վարժարանէն 1907-ին յաջողութեամբ կ'աւար-
 տէ ուսումը: Ռազմական կրթութիւն ստանալէ յետոյ
 զինք կ'ուղարկեն Պարսկաստան, որովհետեւ Դա-
 ճնակցութիւնը որոշած էր միանալ դարսիկ ամբաստան
 սահմանադրականներուն: Հայերը դարսկական յե-
 դափոխութեան յարած էին Պարսկաստանի հայերու
 դասնորոշութեան նկատմամբ:

Քիրտերը, օգտուելով Պարսկաստանի խառն
 իրադարձութենէն, թալանի եւ կոտորածի մտադրու-
 թեամբ կը յարձակին հայկական գիւղերու վրայ: Հայ
 յեդափոխական զինուորները Նժդեհի գլխաւորու-
 թեամբ կը դիմագրաւեն ֆրսկական աստիճանութիւն-
 ները: Սակայն հայ զինուորականութիւնը ռազմա-
 մթերքի դակաս ունէր: Նժդեհը կը գործուղեն Հայաս-
 տան՝ ռազմամթերք հայթայթելու:

Նժդեհի մեկնումը Պարսկաստանէն Կովկաս,
 կը կատարուի այնպիսի ժամանակի մը, երբ ցարա-
 կան Ռուսիոյ կառավարութիւնը կախադաններով ու
 զանգուածային բանտարկութիւններով անգործն կը
 խեղդէր Ռուսաստանի ազատագրական շարժումները
 եւ ուրի ուրով կը հետեւէր Աստիճանականի դայքարի

վերիվայրումներուն: Ռուսաստան դասն առիթը
 կը փնտրէր միջամտելու եւ իր ակնարկները ցոյց տալու
 դարսիկ ու հայ ըմբոսներուն՝ մարտելու համար յե-
 դափոխական հնոցը սահմանակից երկրին մէջ եւ
 թերեւս նոյնիսկ վերջնականապէս հաստատուելու
 հիստիսային Պարսկաստան:

Այս օրջանին ցարական կառավարութիւնը
 միջոցներ չէր խնայէր բնաջնջելու Դաճնակցութի-
 ւնը: Հետեւաբար, սկսած էր արդէն վայրագ հալա-
 ծանքը՝ Հայ Յեդափոխական Դաճնակցութեան
 դէմ: Բոլոր նշանաւոր կուսակցական առաջնորդ-
 ները կը կալանաւորուէին մէկ առ մէկ:

Ցարական կառավարութիւնը կ'ուզէր ար-
 մասախիլ ընել Հ.Յ.Դաճնակցութիւնը: Բանսի
 խուցերու մէջ էին հարիւրաւոր անուանի մտաւորա-
 կաններ ու մարտիկներ:

1909-ին Նժդեհի Սալմաստէն կ'անցնի Ա-
 րաֆսի կողմը, հոն կազմակերպչական աշխա-
 տանքներ տանելու: Նոր Չուղայի (Մղահան, Ի-
 րան) մօտ հարցաքննութեան կը կանչուի ցարական
 ոստիկանութեան կողմէ, որ նախապէս որոշ տեղե-
 կութիւն ունէր Նժդեհի մասին: Հարցաքննութիւնը
 կը վարէր հայաստաց Սարսիկն:

Հարցաքննութեան ժամանակ, Սարսիկն կը
 յայտնէ, որ ինք եւ ռուս կառավարութիւնը ազատու-
 թեան ջատագովներ են, հետեւաբար՝ ի՞նչ կարիք կայ
 յեդափոխական գործողութիւններուն: Գարեգին
 Նժդեհ ցոյց կու տայ դասն կախումը կայսրի
 նկարը, ըսելով՝ այո, ոչ միայն մենք, այլեւ դուք չէք
 դասն նման կուտները: Այս եւ նման այլ տուեալ-
 ներու հիման վրայ կը ձերբակալեն զինք. այնուհե-
 տեւ 1909-ի Մայիսին կը բանտարկուի Նախիջեւա-
 նի բանսի յատուկ սենեակի մը մէջ:

Նախիջեւանի բանսին մէջ քանի մը ամիս
 մնալէ ետք կը փոխադրուի Երեւանի բանսը: 1911-
 ին կ'ազատուի բանսէն եւ կը մեկնի Պուլկարիա:

1909-ին Նժդեհի ձերբակալութեան առի-
 թով, իրեն կը ձօնուի «Արագի ափին ծնած ըն-

կեր...» երգը: Երգը եթէ վերլուծելու ըլլանք, զիսի տեսնենք, որ անծանօթ հեղինակին կողմէ ինքնին յասմութիւն մը կը ներկայացուի մեզի: Պատմա-յին երգը նախ կը սկսի Նժդեհի ծննդավայր Կզնու-սէն, որ կը գտնուի Արագի ափին, ապա մութ բանե-րու մէջ անոր սանջանքը, չարչարանքը, ցարին դէմ Նժդեհի ըմբոսութիւնը ու այդ յասճառով ալ վեր-ջինիս զինուորներուն կողմէ ձերբակալութիւնն ու ւստի, եւ այլն:

Ստրեւ կը ներկայացնենք երգը ամբողջու-թեամբ:

ԳԱՐԵԳԻՆ ՆՇՂԵՎԻ ԵՐԳԸ

Արագի ափին ծնած ընկեր,
Էն Արագին մենք մասաղ,
Մութ բաներում սանջուած ընկեր,
Սուրբ սանջանքիդ մենք մասաղ:

Ուռռա՛, ուռռա՛, ուռռա՛,
Քաջ Նժդեհի սուրը շողողայ:

Յար վախեցաւ, քեզ ւստիք
Իր աշխարհէն շատ հեռուն,
Մեզ մօտ եկար, բարի եկար,
Նոր իտեալներ մեզ բերիր:

Ուռռա՛, ուռռա՛, ուռռա՛,
Քաջ Նժդեհի սուրը շողողայ:

Արեան դաշում, կռուի դաշում,
Սուրը շողայ, քաջ Նժդեհ,
Ուռռա՛ յառաջ, դու գոռացիր,
Կուրծիդ խաչով զարդարեցիր:

Ուռռա՛, ուռռա՛, ուռռա՛,
Քաջ Նժդեհի սուրը շողողայ:



Հայ ժողովուրդի բազմատեսակ երգարուեստին մէջ ունինք օտարներէ փոխ առնուած երգեր, որոնք եր-գուած են ու կ'երգուին նաեւ մինչեւ այսօր: Անոնք ստեղծուած են քաղաքացի ազդեցութեան սակ, յայ-մաններու եւ ընթացիկ իրադարձութեանց կամ դէպքե-րու ընդմէջէն: Երբեմն օտար երգերու իրացումներ են, որոնք հայացուած են կասարելադէս, եւ որոշումնե-րով կարելի եղած է ստուգել աղբիւրները:

Այդ երգերէն է 1909-ին Գարեգին Նժդեհի ձեր-բակալութեան առիթով իրեն ձօնուած առաջին երգը՝ «Արագի ափին ծնած ընկեր» երգը, որու բառերուն հեղինակը մինչեւ օրս կը մնայ անծանօթ:

Սոյն երգին բառերը յասճառ դարձան, յաւ-կադէս անոր կրկներգը՝ «Ուռռա՛, ուռռա՛, ուռռա՛, Քաջ Նժդեհի սուրը շողողայ», որ գուցակենք սոյն

երգին հաւանական օտար ըլլալը եւ ներմուծումը մեր յեղափոխական երգարուեստի բնագաւառը: Այնուհետեւ լծուեցանք լուրջ աւխասանքի: Երկար ուսումնասիրութիւններէ եւ հետազօտութիւններէ ետք, որոշեալ արդիւնք ի յայտ եկաւ, որ ան առնուած է որովկարերէնով երգուող Պուկարիոյ ցարերէն ցար Սիմէոնին ձօնուած մէկ երգէն:

Մեր բաղձանքն էր, որ այստեղ որովկարերէնով երգը ամբողջութեամբ՝ ներկայացնէինք իր իսկ բնագիրով, որովկարերէն տառերով, սակայն տեղի խնայողութեան դասձարով ստորեւ կու սանք համար մը միայն, ապա հայաստան որովկարերէն ու անոր հայերէն թարգմանութիւնը:

Цар Симеон

(Край Босфора шум се вдига)

Край Босфора шум се вдига,
Лъскат саби, щитове,
Ето Симеон пристига,
Воеводите зове:

Упра, упра, упра,
Воеводите зове.

ՅԱՐ ՄԻՄԵՈՆ

(Քրայ Պուֆորա շում սէ տիկա)

Քրայ Պուֆորա շում սէ տիկա,
Լըսրաթ սապի, շփիթովէ,
Էթօ Սիմէոն փրիսթիկա,
Վոյէվոտի սի գովէ:

Ո՛ւռռա, ո՛ւռռա, ո՛ւռռա,
Վոյէվոտի սի գովէ:

Ստորեւ հայերէն թարգմանութիւնը՝

**Վոսփորի մօտերը աղմուկ կը բարձրանայ,
Կը փայլին սուրեր եւ սուրներ,
Ահա Սիմէոնը կը հասնի,
Կը կանչէ իր վոյէվոտները,
Ո՛ւռռա, ո՛ւռռա, ո՛ւռռա
Կը կանչեն իր հայդուկադէսները:**

Գարեգին Նժդեհի կուսակցական կեանքը թէեւ եղաւ փոթորկալի, վերիվայրումներու ենթակայ, սակայն անոր կեանքի բնութագրումն անգամ հոգեդարար եւ խթանիչ առիթ մը կ'ընծայէ ըստ ամենայնի: Ազգային գոյատեւման գեղային առանձնայատկութիւններու արտացոլիչ, կոթողային իրագործում, առաքելափոխ դիւցազնութիւն, որով սնած, քրծուած ու ստեղծագործած էր Հայ Յեղափոխական Դաւանակցութեան մէջ:

Տեղին է նշել, որ Նժդեհ իր մահէն տասնամեակներ անց միայն՝ 1992 Մարտ 30-ին, Հայաստանի Հանրապետութեան դասախազութեան կողմէ արդար զօնուեցաւ, որուն կարիքը դէռ չունէր:

Օրհասական դառնութիւն առաքելափոխ, զինուորական, հռետոր եւ գաղափարախօս Գ. Նժդեհի գերազանցադէմ ազգային ու ճշմարտադէմ մարդկային արժանիքները, առաւել՝ դաւանակցականի ինքնատեղ աւխարհայեացքը եւ անբասիր կենցաղը աներկբայօրէն, հայկական բոլոր կողմերը ի մի խմբելով՝ դեռ երկար դիմումներ սնուցանեն հետագայ սերունդները. շատեր դիմումներ գին իրացնել: Այդ սրբազան առաքելութեանը համար, ինչպէս կը կատարուի արդէն, շատեր սակաւին դիմումներ յօրինեն երգեր, նուիրուած Դաւանակցական, Հայոց Մարտադէմ՝ Գարեգին Նժդեհին:



ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Բռնակալութեան անկումը

Ասիոյ մէկ ծայրէն միւսը թարմ ու փրկարար հով մը կը փչէ. առասպելական անշարժութիւնը, որ կը դամբանէր Ասիան, յարութիւն կ'առնէ: Ասիան՝ ասիացիներուն:

Ասիոյ մէջ կատարուած նորագոյն շարժումներու աղբիւրը պէտք է որոնել Ճափօնի յաղթութիւններուն ու վերածնութեան մէջ: Ֆրանսական Յեղափոխութիւնը ամբողջ Եւրոպան դարաշրջեց, փոքրիկ Ճափօնը ալևոր ու բարբարիկ Ասիային ինքնաճանաչութեան ոգին ներշնչեց և թերևս դարերու դաստիարակութեան գործը կատարեց այդ աշխարհին մէջ:

Եւրոպան կը զգայ զարթնումի նշանները մեծ հսկային, որ երբեմն բարբարոսներու հորդաները կը նետէր Եւրոպայի վրայ. կզգայ թէ հոն՝ նոր աշխարհի մը երկունքը կը պատրաստուի: Հոն, ուր իսլամութիւնը, պուտտայականութիւնը մարդկութիւնը անբանացնելու և երկիրը ամլացնելու ծառայեցին – ինչպէս բոլոր կրօնները - քաղաքակրթութեան ու ազատութեան ոգին կուգայ կերպարանաւորել իրերը և ըմբռնումները:

Յեղափոխութեան կրօնը, իբր արդարութեան վրիժառու բազուկը, կը հետևի ազգերու մէջ նմանութեան օրէնքին: Ասիական երեք պետութիւններ՝ Ռուսիա, Թիւրքիա և Պարսկաստան հրեղէն մկրտութիւններ ունեցան, ապա թէ ոչ Արևելքի մթնոլորտը անշնչելի պիտի ըլլար:

Պարսկաստանը, որ կը կարծուէր մեռելային անշարժութեան դատապարտուած, յեղափոխական խոյանքով մը նոր դարաշրջանի մը մէջ կը մտնէ և կը դնէ հիմը նորագոյն պատմութեան, ուր Իրանի ժողովուրդը կը շօշափէ իր եութիւնը: Պարսկաստանի սահմանադրական շարժումը պատմական բնաշրջում մը չունի. կարելի է ըսել թէ անակնկալ կերպով յաջողութիւն ունեցաւ: Պարսիկ ժողովուրդը կրօնի խոժոռ ադանդականութեան մը մէջ կողիացած, ապաստեալ էր իր գեղեցիկ ընդունակութիւնը և բնական ձիրքերը:

Պարսիկ գրականութիւնը, «գինիով ու սերով» յափրացած, հեռու էր անոր ջիղերուն մէջ նախաձեռնութեան էլէկտրացումներ առաջ բերելէ: Այդ միակողմանի գրականութիւնը հաշիշն եղած է պարսիկ մտքին: Չրադաշտը «դրախտի երկնային բոցը կը բերէր» Իրանին. նոր Պարսկաստանը հին Իրանի առաքինութիւններէն ոչ մէկը պահեց: Իսլամական կրօնը խեղդեց անոր մէջ ցեղին ինքնատիպութիւնը:

Պարսկաստանի յետամնացութեան պատճառները պէտք է նաև որոնել անշուշտ իր աշխարհագրական միջանկեալ աննպաստ դիրքին մէջ, երբ Արևելքի բարբարոսները կարշաւէին ու քարուքանդ կընէին զայն, ինչպէս նաև երկրի տնտեսական պայմաններուն մէջ: Իրանի լեռնադաշտը աշխարհի այն երկիրներէն է՝ ուր բնութիւնը ջուրի մասին ամենէն ժլատն էր և այդ պատճառով երկրին կէտը գրեթէ անապատային վիճակ մը կը ներկայացնէ:

Կառավարութիւն, հոգևորականութիւն, բնական ու տնտեսական աննպաստ պայմաններ, կարծես դաշնակցած՝ դարերէ ի վեր նպատակ դրած են ոչնչացնել Իրանի պէս գեղեցիկ երկիր մը և մաշեցնել ժողովուրդ մը, որ իղէալականութեան խմորը ունի իր մէջ, զգայուն, երազուն ու մտաբոն:

Պարսկաստանը քաղաքականապէս վտանգի տակ էր: Իբրև պետութիւն բախտին խաղալիք դարձած էր: Անգլիա և Ռուսիա տէրն էին այդ երկրին. թերևս կէտին և արջին հակառակութիւնն էր, որ ցարդ պահպանեց անոր ամբողջութիւնը: Անգլո-ռուս համաձայնութեան մէջ Ռուսիա կը նշմարէր իրա-

գործումը Պարսկաստանի հիւսիսային մասին հետզհետէ գրաման:

Ռուսիոյ ջանքերը յեղափոխութիւնը խեղդելու և շահի բռնակալութիւնը պաշտպանելու համար՝ չպսակուեցան: Ի պատիւ Անգլիոյ պէտք է ըսել որ յաջողեցաւ փրկել Պարսկաստանի դրութիւնը և... Էութիւնը: Ռուսիա, իրերու ուժին առջև տեղի տալով, կը համակերպի ընդունիլ Պարսկաստանի մէջ կատարուած փոփոխութիւնը: Սակայն ներքին պայմանները, յետադիմական դաւերը, արտաքին քաղաքական ինտրիկները բաւական են վրդովելու համար Պարսկաստանի խաղաղ յառաջադիմութիւնը: Պարսկաստանը Թիւրքիոյ բաղդատմամբ աւելի միատարր երկիր մըն է, հոն ցեղային և կրօններու բարդութիւնները գոյութիւն չունին կամ գրեթէ: Պարսիկ ժողովրդի մտքի ճկունութիւնը, իղէալական ձգտումը կը յուսադրէ Իրանի բոլոր անկեղծ բարեկամները:

Ըսենք որ երկու իսլամ երկիրներու յեղափոխական ընթացքին մէջ շատ նմանութիւն կայ: Եւ որպէսզի անոնց ազատական շարժումները բոլորովին նմանէին, հայ արիւնին գոհաբերութիւնը ևս հարկաւոր էր Իրանի ատրուշանին վրայ: Պարսկաստանը ևս ունեցաւ իր Կիլիկիան: Վերջին հեռագիրները կը գուժեն որ 12 հայ գիւղեր քարուքանդ եղած ու թալանուած են: Չենք կրնար չհաւատալ որ Ռուսաստանի անիծեալ ձեռքը գտնուի այդ ոճիրներուն մէջ, որպէսզի Պարսկաստանի գործերուն միջամտելու պատրուակ ստեղծէ և խառնակութիւն ձգէ ներքին գործերուն մէջ: Իր երկրին մէջ կը հալածէ, դուրսը կը հալածէ և դեռ պատմական կուրտութիւնով մը կը միամտիք թէ Ռուսիա հայերու «աւանդական» պաշտպանն է:

Պարսկաստանի նոր ընթացքին բոլոր պարագլուխները կարելի է ըսել ազատամիտ ուժեր են, սիրահար եւրոպական քաղաքակրթութեան: Հին գլուխներ, ինչպէս ըրին Թիւրքիոյ մէջ, հաւանօրէն մեծ դեր չկրնան խաղալ հոն և բռնաբարել սահմանադրութեան ոգին:

Ընկեր Էդիկի աշխատաստեղյակում

ԷԴՈՒԱՐԴ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Յողովաների ժողովածուն
սղագրած «Դրօշակ»ում

Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՅՕՂԻԱՏՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ
ՏՊԱԳՐԻԱԾ «ԴՐՕՇԱԿ»ՈՒՄ

INSTITUT FÜR ARMENISCHE FRAGEN e.V.
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

Marsstrasse 14 b. 80335 München

ՀՅԴ Ս. Վրացյան կենսոնի երկրորդ հարկում, որն այսօր էլ կար մի սենյակ, ուր հաճախ կարելի էր ծեսնել Էդուարդ Հովհաննիսյանին՝ ընկ. Էդիկին: Ոչ ոք չգիտեր, թե ում աշխատաստեղյակն էր դա՝ այնքան շատ մարդ էր հավաքվում այդ սենյակում, աղմուկն այնքան շատ էր այնտեղ: Մի խոսքով՝ ճիշտ հակոսնյան էր այդ սենյակը Վերագույն մարմնում սիրող լուրջ ու ֆաղափական մթնոլորտի:

Ժողովներ չէ, որ գումարվում էին այդ սենյակում: Զույգների, վեճերի ու ֆննարկումների թեմաներ էին այստեղ ծնվում, հունցվում ու հասունանում, դառնում խորհրդածության նյութ, ինչու չէ՝ նաև ժողովների ֆննարկման առարկա: Այս ողջ իրարանցման ոգին ընկեր Էդիկն էր: Երբ բացեիր դուռը՝ նա էր այնտեղ, ահել ու ջահել գլխին հավաքած, խոսքը՝ բերանին, կամ մեկնումեկին ուշադիր լսելիս: Դռան կողմն էլ չէր նայում՝ թե ով եկավ, ով դուրս գնաց: Բոլորն անարգել մոտ մոտ էին այդ սենյակ: Հասկապես երիտասարդ դաճակցականների կուռքն էր՝ նրանց, ում համար խորհրդային իշխանության սարիների վարագույրն արդեն բարձրացվել էր, ում համար դեռ Դաճակցությունը սակավին մուշակապ մի գաղափար էր՝ իր հայրենաստեղծ, բայց վսարանդի կյանքի բոլոր ծախսերով: Այդ ծախսերն էր բացում ընկ. Էդիկը երիտասարդության առջև՝ իր համով բառ ու բանով, իր կասակախառն դասնություններով: Շատ սարիներ առաջ տեղի ունեցած դեղերի մասին խոսում էր այնպիսի ոգևորությամբ ու համոզմամբ, որ կարելի էր մտածել, թե դրանց անմիջական մասնակիցն ու դերակատարն է եղել: Կրեք հանկարծ ու խորամանկ կիսաժողիսով կնայեք գլխին թափված ջահելների դեմքին՝ հասկացա՞ն արդյոք ասածը:


Իսկ նա իր բովանդակալից կյանքում շատ բան հասցրեց ասել. ասաց իր աշխատություններով, մենագրություններով ու հարազատ «Դրօշակի» միջոցով, որի հարսն ճամփի երեսուն սարիների անբաժան ուղեկիցն է եղել: Էդուարդ Հովհաննիսյանը եղավ այն երջանիկ սերնդի վառ ներկայացուցիչը, ով հարազատ կուսակցության անաղաղ գաղափարախոսությունը՝ թրծված ու բյուրեղացած աշխարհափյուռ հայության ծոցում, բերեց մայր հայրենիք ու դարձավ նրա սարածողը հայրենի հողի վրա:

Հավանաբար, մեր հիշատակած սենյակը շատ ժամանակ «խլեց» ընկ. Էդիկից, ու նա չհասցրեց շատ այլ գործերին զուգահեռ զբաղվել նաև «Դրօշակում» հրատարակված իր բազում հոդվածների ժողովածուն կազմելու գործով: Բայց այսօր, իր վաղաժամ մահից հինգ տարի անց, ժողովածուն մեր սեղանին է՝ որդես ընկերների, համախոհների եւ դարձապես իրեն ճանաչողների նվեր ու երախտի սուրճ:

Գիրքը հրատարակության է դասրասել Մյունխենի Հայկական հարցերի հաստատությունը: Սովորածավալ այս հաստում ամփոփված են դոկտոր, դոկտոր Էդ. Հովհաննիսյանի մոտ երկու հարյուր հոդվածներն ու հոդվածաշարերը, որոնք անցյալ դարի 70-ական թվականների սկզբից դարբերաբար լույս են տեսել ՀՅԴ Բյուրոյի դաստնաթերթում: Հայկական հարցերի հաստատության նախագահության առաջաբան խոստում ընդամենը մեկ նախադասությամբ հստակ ասված է. «Ասիկա ոչ միայն մեր հանգուցեալ մեծանուն ընկերոջ արժին փափափն էր, որ յե՛ս մահու կ'իրագործենք իր յիշատակը յարգելու համար, այլ ծառայութիւն մըն է, որ կմասնուցանենք այն բոլոր հայորդիներուն, որոնք, «մասկազմելով հայ ժողովրդի ճակատագրին», ծարաւն ունին զիրենք առաջնորդող մտքի մը»: Նույնքան հակիրճ ու դիտուկ է նաև ընկեր Էդիկը, երբ թղթին է հանձնում իր մտորումները, դիտարկումներն ու հղացած գաղափարները: Դրանք, թեև հաճախ արդյունք են առանձին դեղիքից, իրադարձություններից ու իրադրություններից ստացած տղավորությունների, այնպիսի ընդհանրացումներ են դարձնակում իրենց մեջ, որոնք այսօր էլ այժմեական են դարձնում ասելիքը, ընթերցողին կողմնորոշում ամենախճճված ֆաղափական կացության մեջ: 1988 թվականի իր հոդվածներից մեկում, որ վերնագրված է «Երկրաշարժը եւ Արցախի հարցը», Էդ. Հովհաննիսյանը, վերլուծելով Գորբաչովի հանդասրասի այցը Հայաստան, հասնում է հայ ժողովրդի ոգու բյուրեղության, անկոտրում կամփի բանաձևի արծարծմանը: Նկարագրելով այդ այցի մի շարք մանրամասներ՝ հեղինակը մեկեն կանգ է առնում բուն ասելիքի վրա. «Բայց ամենակարեւորը Արցախի վերաբերեալ նրա սած բացատրութիւններն էին: Գորբաչեւը իր զարմանքը յայտնեց եւ անբարոյականութիւն անուանեց այն փաստը, որ երկրաշարժի աղէտի դայմաններում մարդիկ Արցախի հարցն են բարձրացնում: Չարմանալ, անտուտ, կարելի է, բայց միայն հայ ժողովրդի վճռական կամփի վրայ, որը, նոյնիսկ սարսափելի աղէտի դայմաններում շարունակում է դայբարը իր արդար դահանջների եւ իրավունքների համար»: Սա սնադարձությունն չէ, սեփական ժողովրդին մյուսներից գերադասելու ցանկությունն ու մղումն չէ, որ ցուցաբերում է Էդ. Հովհաննիսյանը: Մեր առջև հայ մտավորականն է, ֆաղափական գործիչն ու մեծ հայրենասերը, ում համար Գորբաչովի այդ դահի այլայլմունքը մի բան էր միայն նշանակում՝ հայ ժողովրդին, ինչդեռ աշխարհի մյուս լուսավորյալ ազգերին, ներհասուկ է ամենակարևոր մի բան՝ կենսունակությունը: Մենք վերընձյուղվեցինք Եղեռնից հետո, Երկիր կերտեցինք: Մենք երկրաշարժի ավերների վերերն էլ կբուժենք մնալով սերը մեր դահանջների եւ իրավունքների: Սա է ասել Էդուարդ Հովհաննիսյանը:

Մեզ մնում է Էդ. Հովհաննիսյանի հազարավոր ընթերցողների անունից մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայկական հարցերի հաստատությանը եւ այս հրատարակության համար տնած մարդկանց, ում շնորհիվ հրատարակ առիթն ունենք էլի մեկ անգամ այցելելու ընկ. Էդիկի աղմկոտ աշխատասենյակը՝ Ս. Վրացյան կենտրոնի երկրորդ հարկում:

"Դրոշակ"



Ռուբեն Արփյան

«Վասակա՛վոր նկարիչ Ռուբեն Արփյանը ծնվել է 1948 թվականին Երևանում: Նրա աշխատանքները ցուցադրվել են Հայաստանի ազգային թատերասրահում, Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանում: Քեղանկարչության Արամե սրահը նրա ստեղծագործությունները ներկայացրել է միջազգային ասրեր ցուցահանդեսներում և տնավաճառներում: Ռուբեն Արփյանի կտավները, նրանց սյուժեն և նրբերանգների հարսությունը, հազեցած են նկարչին բնորոշ ինֆնասիոթյամբ ու հոգևոր արտահայտչականությամբ: Նրա համարձակ ու հանդգնությամբ առլեցուն արվեստը ներկայանում է որդես խորաթափանց զգացողություն, ինչը, հաճախ համեմվում է հումորով, հասնելով, երբեմն, գրոսեսկի: Պատկերված կերպարներից հորդում է մի սեսակ մոգական հմայք, գրավչություն: Այդ կերպարները նաև հարցատեր զուցակից են:



ԴՐՕՇԱԿ

Պ ա տ կ ե ր ա ս ր ա հ

